

Հավելված N 1
 ՀՀ կառավարության 2014թ.
 նոյեմբերի 27-ի նիստի N 50
 արձանագրային որոշման

ՀՀ ԱԺ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
 ՆԱԽԱԳԾԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

	Ընդամենը փոփոխություններ (ավելացումները բերված են դրական նշանով, պակասեցումները՝ փակագծերում)
Ա	1
Ա. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	6,995,142.3
այդ թվում	
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	7,504,400.0
2. Այլ եկամուտներ	18,342.3
3. Պաշտոնական դրամաշնորհներ	(527,600.0)
–	
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	6,995,142.3
այդ թվում	
Ա. ԸՆԴԱՄԵՆԸ ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	6,453,022.5
այդ թվում	
1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ, ԸՆԴԱՄԵՆԸ	(441,028.7)
այդ թվում	
1.1. ՀՀ գյուղատնտեսություն	(49,838.3)
1.2. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	(13,072.6)
այդ թվում	
զ) Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի	(1,338.8)

(թվային տախտգրաֆի) ներդրում	
ը) հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալում	(11,733.8)
1.3. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	40,000.0
այդ թվում՝	
տնտեսական հետազոտությունների կենտրոնի ստեղծման ծրագիր	40,000.0
1.4. ՀՀ բնապահպանության նախարարություն	20,000.0
1.5 ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	(15,000.0)
այդ թվում՝	
Ռադիոակտիվ թափոնների վնասագերծման ծառայություններ	(15,000.0)
1.6 Սուբսիդիաներ ձեռնարկությունների վնասների ծածկման համար	(423,117.8)
այդ թվում՝	
Երևանի մետրոպոլիտեն	(329,649.5)
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	(14,328.3)
«Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ	(33,238.8)
«Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ	(45,901.2)
2. ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	5,886,616.0
այդ թվում՝	-
2.1. կրթություն	(997,523.2)
2.2. մշակույթ	1,946,592.3
2.3. սպորտ	(1,277.1)
2.4. տեղեկատվություն	(69,976.0)
2.5. Սոցիալական պաշտպանություն	5,008,800.0

այդ թվում՝	-
կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրում	5,008,800.0
3. Ապարատի պահպանման ծախսեր	231,237.8
4. Ուժային կառույցներ	(1,225,068.6)
որից՝	-
ՀՀ պաշտպանության նախարարություն	(1,741,683.0)
արտագերատեսչական ծախսեր	516,614.4
5. Միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից ստացված վարկերի սպասարկման ծախսեր	(159,923.8)
6. Արտարժույթային պետական պարտատոմսերի սպասարկում (տոկոսավճարներ)	(2,100.0)
7. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ից ստացված վարկի սպասարկում	(5.6)
8. Միջազգային կազմակերպություններում անդամակցության ծախսեր (ՀՀ ԱԳՆ)	(103,914.3)
9. Միջազգային կազմակերպություններում անդամակցության ծախսեր (ՀՀ ԱԺ)	(13,465.7)
10. Միջազգային կազմակերպություններում անդամակցության ծախսեր (ՀՀ հեռուստառադիոընկերության խորհուրդ)	(1,605.8)
11. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	(1,931,480.0)
12. Այլ միջոցառումներ	4,213,761.1
այդ թվում՝	-
12.1. Մուրհակների սպասարկման ծախսեր	259.4
12.2. Արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի հաշվին իրականացվող նպատակային ծրագրեր	(40,102.2)

12.3.Արտաքին աղբյուրներից ստացվող վարկային և դրամաշնորհային միջոցներով իրականացվող նպատակային ծրագրերին ՀՀ կառավարության մասնակցություն	3,215,090.0
12.4.ՀՀ պետական պարտատոմսերի գովազդի ծախսեր	31,000.0
12.5. պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին	928,871.2
12.6.Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման, գերեզմանի բարեկարգման, մահարձանի, հուշատախտակի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացման համար	59,700.0
12.7.Բյուրերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների տեղադրման և սպասարկման վճար	18,257.7
12.8.Պետական աջակցություն Բարեկամական և Դուվել համայնքներին	685.0
Բ. ԸՆԴԱՄԵՆԸ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ)	542,117.9
այդ թվում	
1. Դեսպանության շենքի գնում	(1,712.0)
2.Կրթության ոլորտում կապիտալ ծախսեր	(950,000.0)
այդ թվում	-
2.1. Կրթական օբյեկտների հիմնանորոգում և շինարարություն	(1,380,000.0)
2.2. Մարզական օբյեկտների հիմնանորոգում և շինարարություն	230,000.0
2.3. Կրթական հիմնարկների համար այլ ակտիվների ձեռքբերում	200,000.0
3. Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման ծրագիր	200,000.0

4. Առողջապահական օբյեկտների շինարարություն	950,000.0
5. Ուժային կառույցներ	1,741,683.0
որից՝	-
ՀՀ պաշտպանության նախարարություն	1,741,683.0
6. Կառավարման ապարատ (այլ ակտիվների ձեռքբերում)	642,717.5
7. Արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի հաշվին իրականացվող նպատակային վարկային ծրագրեր	(1,201,531.6)
8. Միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցներով իրականացվող նպատակային ծրագրերին ՀՀ կառավարության մասնակցություն	(839,039.0)
ԸՆԴԱՄԵՆԸ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՄԵՐ	6,995,142.3
	-
Գ. ԴԵՖԻՑԻՏ	(0.0)
Դ. Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ ընդամենը	0.0
այդ թվում՝	
Ներքին աղբյուրներ՝ ընդամենը	264,472.5
այդ թվում՝	
Ը. Արժեթղթեր, իրավաբանական անձանց կապիտալում մասնակցություն, տարեսկզբի ազատ մնացորդ և սեփականաշնորհման միջոցներ՝ ընդամենը	(3,995.0)
այդ թվում՝	
1. Պետական արժեթղթեր	-

2.Մուրհակների մարում	(3,995.0)
II. Վարկավորում՝ հանած մարում	268,467.5
այդ թվում՝	-
ա) Վարկավորում	200.0
այդ թվում՝	-
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ից ստացված վարկի մարում	200.0
բ) Մուտքեր վարկերի վերադարձից	268,267.5
I. Արտաքին աղբյուրներ՝ ընդամենը	(264,472.4)
այդ թվում	-
ա) Վարկերի ստացում	(1,245,583.8)
որից՝	
ա) Նպատակային վարկային ծրագրերի ֆինանսավորման համար	(1,241,633.8)
գ) բյուջեին ընդհանուր աջակցության վարկ	(3,950.0)
որից՝	
Համաշխարհային բանկ	(2,500.0)
Ասիական Զարգացման Բանկ	(1,450.0)
II. Վարկերի մարում	973,539.1
III. Վարկավորում՝ հանած մարում	(52.7)
այդ թվում	
Վրաստան	(52.7)
IV. Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարում	7,625.0

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԵՎ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏՈՒՄ ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ, ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ, ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
1.	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծում 10-րդ բաժնի 06 խմբի 01 դասի «Բնակարանային ապահովում» ծրագրին 500 մլն դրամի փոխարեն նախատեսել 2.5 մլրդ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
2.	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծում 10-րդ բաժնի 07 խմբի 01 դասի «06. ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998 թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածով սահմանված դրամական օգնության տրամադրում» ծրագրին հատկացված 10.409.460,0 դրամ գումարն ավելացնել այնքան, որ այդ ծրագրով պետական կենսաթոշակ չստացող՝ այլ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		պետություններում այդ թվում ԱՖղանստանում մարտական գործողությունների մասնակիցներին, ինչպես նաև ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցներին տրամադրվող 5000 դրամ դրամական օգնությունը դառնա 10000 դրամ:	
3.	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծում 10-րդ բաժնի 07 խմբի ծրագրերում նախատեսել «Բռնադատվածների կամ նրանց առաջին հերթի ժառանգների կողմից բնակարանային անհատական շինարարության նպատակով կամ անավարտ բնակելի տան շինարարությունն ավարտին հասցնելու, ինչպես նաև բնակարան ձեռք բերելու կամ վերանորոգելու համար» ծրագիրը և դրա համար հատկացնել 100.0 մլն դրամ: Առաջարկությունը ներկայացվում է «ՀՀ կառավարության 2000 թվականի հուլիսի 20-ի թիվ 410 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման համաձայն:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ելքերի առաջնահերթությունից:
4.	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծում 10-րդ բաժնում նախատեսել համապատասխան գումար՝ ԱՖղանստանում մարտական գործողությունների մասնակիցների անդամավճարներն ԱԴԿ երկրների համապատասխան կառույցներին փոխանցելու նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
5.	ՀՀ Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և	«Կրթական օբյեկտների հիմնանորոգում և շինարարություն» բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ 09 բաժնի, 06 բաղադրիչի 01 դասի 31-րդ ծրագրում լրացնել 100 մլն դրամ՝ ՀՀ Արմավիրի մարզի	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արմավիրի մարզի Հայթադի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի և հանդիսություն-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	Հայթաղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճը վերանորոգելու նպատակով:	ների դահլիճի վերանորոգման նպատակով նախատեսվել է 100.0 մլն դրամ:
6.	ՀՀ Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	«Գիտության և գիտատեխնիկական ծրագրերի գծով ծախսերի» 01 բաժնի, 04 խմբի 01 դասում՝ լրացնել 15 մլն դրամ՝ «Հայկական հանրագիտարան՝ հրատարակություն» ՊՈԱԿ –ի պահպանում» ծախսային ծրագրով (ըստ հավելված 1, Աղյուսակ N 22-2):	«Հայկական հանրագիտարան՝ հրատարակություն» ՊՈԱԿ-ին ՀՀ 2015թ. պետական բյուջեից հատկացվելու է 29190.7 հազ. դրամ՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում: Լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացումը 2015թ. բյուջեի շրջանակներում հնարավոր չէ, իսկ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային որևէ ծրագրի առկայության դեպքում, այն կքննարկվի ընդհանուր մոտեցման շրջանակներում՝ միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:
7.	ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով	Առաջարկում ենք հատկացնել հավելյալ 50.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 02 խմբի 03 դասի՝ «Ստոմատոլոգիական ծառայություններ» ծրագրին: Դեռևս 2014 թվականի պետական բյուջեով ընդլայնվել էր բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց ցանկը՝ 36.0 և ավելի անապահովության միավորները իջեցվել են մինչև 30.0 անապահովության միավորների: Սակայն, այս նոր խմբի շահառուները 2014 թվականին զրկված են եղել անվճար ստոմատոլոգիական ծառայություններ ստանալու իրավունքից, քանի որ համապատասխան	Առաջարկությունը ընդունվել է: «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով ավելացվել է 50.0 մլն դրամ ի հաշիվ «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագրի:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		միջոցներ հատկացված չեն եղել: Հաշվի առնելով այդ հանգամանքը, առաջարկում ենք «Ստոմատոլոգիական ծառայություններ» ծրագրին հատկացնել հավելյալ 50.0 մլն դրամ, որը կնպաստի լիարժեք իրականացնել այս խմբում ընդգրկված անձանց անվճար ստոմատոլոգիական բժշկական ծառայությունները:	
8.	ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով	<p>Առաջարկում ենք հատկացնել հավելյալ 50.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 06 խմբի 01 դասի՝ «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրին:</p> <p>Ինչպես և վերը նշված դեպքում 2014 թվականի պետական բյուջեով բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց ցանկը ընդլայնվել էր՝ 36.0 և ավելի անապահովության միավորները իջեցվել էր մինչև 30.0 անապահովության միավորների: Սակայն, այս նոր խմբի շահառուները 2014 թվականին զրկված են եղել անվճար դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ ստանալու իրավունքից, քանի որ համապատասխան միջոցներ հատկացված չեն եղել: Հաշվի առնելով այդ հանգամանքը, առաջարկում ենք «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրին հատկացնել հավելյալ 50.0 մլն դրամ, որը կնպաստի լիարժեք իրականացնել այս խմբում ընդգրկ-</p>	<p>Առաջարկությունը ընդունվել է:</p> <p>«Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի գծով ավելացել է 50.0 մլն դրամ ի հաշիվ «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		վաճ անձանց անվճար բժշկական ծառայությունները:	
9.	ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով	<p>Առաջարկում ենք հատկացնել հավելյալ 12.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 06 խմբի 01 դասի՝ «Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրին:</p> <p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված է պարտադիր ախտաբանաանատոմիական հերձումներ իրականացնել պերինատալ մահացության դեպքերում, ուստի ավելացվող գումարը հնարավորություն կտա լիարժեք իրականացնել օրենքով սահմանված պահանջը:</p>	<p>Առաջարկությունը ընդունվել է:</p> <p>«Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրի գծով ավելացել է 10.5 մլն դրամ ի հաշիվ «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի:</p>
10.	ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով	<p>Առաջարկում ենք հատկացնել հավելյալ 15.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 06 խմբի 01 դասի՝ «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայություններ» ծրագրին:</p> <p>Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայությունները իրականացվում են ՀՀ ԱՆ «Մարդասիրական</p>	<p>Առաջարկությունը ընդունվել է:</p> <p>«Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայություններ» ծրագրի գծով ավելացել է 15.0 մլն դրամ ի հաշիվ «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի համակարգման ծառայություններ» ծրագրի:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>օգնության հանրապետական կենտրոնի» կողմից: Կենտրոնի ջեռուցման ծախսերը մինչ այժմ անհատույց հոգացել է Էրեբունի ԲԿ-ն: Ներկայումս, այս ծախսերը անհրաժեշտ է ներառել կենտրոնի 2015 թվականի բյուջեի ծախսերում: Ուստի 2014-2015 թվականների կենտրոնի ջեռուցման ծախսերը առաջարկվում է ներառել «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսագերծման և բաշխման ծառայություններ» ծրագրի մեջ՝ 15.0 մլն դրամի չափով:</p>	
11.	<p>ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով</p>	<p>Առաջարկում ենք հատկացնել հավելյալ 17.0 մլն դրամ՝ 07 առողջապահության բաժնի 02 խմբի 02 դասի՝ «Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» ծրագրին:</p> <p>Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծրագիրը միջազգային կազմակերպությունների կողմից գնահատվել է որպես Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ տարածաշրջաններում իրականացվող բացառիկ ծրագիր: Ուստի նշված ծրագրի բարելավման և ընդլայնման նպատակով առա-</p>	<p>Առաջարկությունը ընդունվել է:</p> <p>«Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» ծրագրի գծով ավելացել է 17.0 մլն դրամ ի հաշիվ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի համակարգման ծառայություններ» ծրագրի:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ջարկվում է հատկացնել հավելյալ 17.0 մլն դրամ, որից 2.5 մլն դրամը՝ Վանաձորի, 2.5 մլն դրամը՝ Սպիտակի և 12.0 մլն դրամը՝ Գյումրիի համապատասխան կենտրոնների աշխատանքների կազմակերպման համար:</p>	
12.	<p>ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով</p>	<p>Առաջարկում ենք պետության կողմից սահմանել միանման գներ բոլոր ծրագրերից ֆինանսավորվող սրտի վիրահատությունների համար:</p> <p>Սրտի վիրահատությունների ֆինանսավորումը իրականացվում է «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց», «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների» և «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայությունների» ծրագրերով, սակայն տարբեր ծրագրերում սրտի նույնատիպ վիրահատությունների համար սահմանված են տարբեր գներ: Առաջարկում ենք նշված բոլոր ծրագրերով սրտի վիրահատությունների գները սահմանել միանման, որը հնարավոր կդարձնի բարձրացնել հատկացված միջոցների ծախսման արդյունավետությունը:</p>	<p>Նախնական քննարկումների համաձայն նշված հարցը կապված է տարբեր ծրագրերով իրականացվող սրտի վիրահատությունները մեկ ընդհանուր ծրագրում համախմբելու, միասնական փաթեթ սահմանելու և միևնույն գներով փոխհատուցելու խնդրի հետ: Հաշվի առնելով, որ սրտի վիրահատությունների ծախսերը մեկ ընդհանուր ծրագրում համախմբման հարցի քննարկումը հետաձգվում է, ուստի և միասնական գների հարցի քննարկումը ներկայումս օրակարգային չէ:</p>
13.	<p>ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի</p>	<p>Ծրագրային դասիչը- 1060 ԱԾՕ1 Աշխատակազմի կողմից իրավական ծառայություն ստացած անձանց քանակ</p> <p>Քանակական ցուցանիշ -5000</p>	<p>Որակական ցուցանիշ՝ ուսումնասիրված դիմում-բողոքների մեջ դրական լուծում ստացած դիմում-բողոքների քանակը տոկոսային հարաբերակցությամբ կազմում է 5.7% նշված 4 %-ի փոխարեն</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Առաջարկության դիրքորոշումը
	մշտական հանձնաժողով	<p>Որակական ցուցանիշ- Բողոքների ուսումնասիրությունն ու քննարկումը կատարվում է պայմանավորված բողոքների բնույթով, առանձնահատկությամբ՝ համաձայն «Ասահմանադրության, Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի դրական լուծում ստացած դիմումների քանակը 200, այսինքն՝ 4%-ը, տեսակարար կշիռ:</p> <p>Առաջարկվում է այս ցուցանիշը նախագծի քանակական ցուցանիշներից հանել և տեղադրել որակական մասում:</p> <p>Ժամկետայնություն- Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վարչությունները ստացված դիմումների 95 տոկոս դեպքերում դիմումներն ուսումնասիրել և ընթացք են տվել 3 աշխատանքային օրվա ընթացքում:</p>	<p>(ուսումնասիրված դիմում-բողոքների քանակը տարեկան ակնկալվում է 3500 /որում կարող են ներառվել նաև կոլեկտիվ դիմումներ, այսինքն՝ 5000 անձանց դիմումները ակնկալվում է, որ կլինեն 3500/, նշված ցուցանիշի նկատմամբ հաշվարկվում է 200 դրական լուծում ստացած դիմում-բողոքների հարաբերակցությունը %-ային արտահայտությամբ՝ $200 * 100 / 3500 = 5.7\%$):</p> <p>Ժամկետայնություն - ընդունվել է մասամբ և շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վարչությունները ստացված դիմումներն ուսումնասիրում և ընթացք են տալիս ողջամիտ ժամկետում»:</p> <p>Այդ կապակցությամբ «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի վերջնական տարբերակում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
14.	ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով	<p>Ծրագրային դասիչը - Օրենսդրության մեջ փոփոխությունների առաջարկներ և նախագծերի վերաբերյալ եզրակացություններ</p> <p>Քանակական ցուցանիշ- 80</p> <p>Որակական ցուցանիշ- Ակնկալվում է, որ օրենսդրական առաջարկների 45% -ը կընդունվեն:</p>	<p>Որակական ցուցանիշ - չի ընդունվել:</p> <p>Որոշ որակական չափորոշիչների թվային ցուցանիշներ սահմանելն անհնար է, քանի որ ՀՀ մարդու իրավունքների աշխատակազմի ստորաբաժանումների աշխատանքի որակն ուղղակիորեն կախված է համապատասխան պետական մարմնի կատարած աշխատանքի արդյունքից, քաղաքական կամքից, իսկ քանակական աճն ուղղակիորեն կախված է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			անձանց կողմից կատարված խախտումների և քաղաքացիների կողմից ստացված դիմում-բողոքների թվից:
15.	ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով	<p>Ծրագրային դասիչը- Բռնությունների կանխարգելման վարչության այցելություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հիմնարկներ, կազմակերպություններ՝ ներառյալ զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր (այցերի թիվը)</p> <p>Քանակական ցուցանիշ - 250</p> <p>Որակական ցուցանիշ - Առաջարկվում է վերցնել նախորդ տարվա տեսակարար կշիռը, ինչքան բացահայտումներ են ակնկալվում կատարել և բարելավել պաշտպանի գրասենյակի կողմից (2013 թվականի 212 այցի համեմատ):</p>	<p>Որակական ցուցանիշ - չի ընդունվել.</p> <p>Բռնությունների կանխարգելման վարչության յուրաքանչյուր այցելության դեպքում արձանագրվում են խախտումները, թերությունները, այնուհետև հաջորդ անգամ այցելությունների և մշտադիտարկումների ժամանակ ստուգվում և արձանագրվում է նախորդ անգամ բացահայտված թերությունների լուծված կամ չլուծված լինելը, կազմվում հապատատասխան եզրակացություն:</p> <p>Որակական չափորոշիչների թվային ցուցանիշներ սահմանելն անհնար է, քանզի ՀՀ մարդու իրավունքների աշխատակազմի ստորաբաժանումների աշխատանքի որակն ուղղակիորեն կախված է համապատասխան պետական մարմնի կատարած աշխատանքի արդյունքից, քաղաքական կամքից, իսկ քանակական աճն ուղղակիորեն կախված է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից կատարված խախտումներից և քաղաքացիների կողմից ստացված դիմում-բողոքների թվից:</p>
16.	ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով	<p>Ծրագրային դասիչը - Արագ արձագանքման վարչության այցելություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հիմնարկներ, կազմակերպություններ (ներառյալ՝ զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր)</p>	<p>Որակական ցուցանիշ - չի ընդունվել.</p> <p>Արագ արձագանքման շրջանակներում իրականացվում է.</p> <p>* մարդու իրավունքների խախտման դադարեցում,</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
		<p>Քանակական ցուցանիշ- 220</p> <p>Որակական ցուցանիշ - Այցելությունների արդյունքում նախատեսվում է արձանագրել դրական տեղաշարժեր, մասնավորապես. մարդու իրավունքների ակնհայտ և կոպիտ խախտման դեպքերի նվազում 10%</p> <p>Ժամկետայնություն - Ահազանգ ստանալիս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործող արագ արձագանքման խումբը ահազանգերի 95 տոկոսի դեպքում դեպքի վայր է հասել ողջամիտ ժամկետում:</p>	<p>*մարդու իրավունքների խախտման նախնական արձանագրում՝ հետագայում պաշտոնապես պարզաբանումներ ստանալու և պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով,</p> <p>*մարդու իրավունքների պարզաբանում և իրավաբանական խորհրդատվություն:</p> <p>Այցելությունների արդյունքում նախատեսվում է արձանագրել դրական տեղաշարժեր, մասնավորապես.</p> <ul style="list-style-type: none"> -մարդու իրավունքների ակնհայտ և կոպիտ խախտման դեպքերի նվազում, -մարդկանց իրավագիտակցության դրական փոփոխություն, իրավական գիտելիքների ավելացում՝ հատկապես իրավունքների և պարտականությունների իրազեկման ձևով, -մարդու իրավունքները խախտած պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկում, -պաշտոնատար անձանց գործելաճի դրական փոփոխություն, մարդու իրավունքների նկատմամբ պատասխանատվության զգացումի առավել ամրապնդում, պաշտոնական պարտականությունների իրականացման շրջանակներում գործողությունների առավել զգոնություն: <p>Սակայն ստույգ հնարավոր չէ կանխատեսել որքան կնվազեն բացահայտված խախտումները՝ կախված պետական մարմինների կատարած աշխատանքի արդյուն-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>քից, քաղաքական կամքից:</p> <p>Ժամկետայնություն - ընդունվել է ճշտումներով հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>«Ահազանգ ստանալիս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործող արագ արձագանքման խումբը ահազանգերի 95%-ի դեպքում դեպքի վայրի է հասնում ողջամիտ ժամկետում՝ կապված հեռավորությունից, թույլատրելի արագությունից, խցանումներից, եղանակային պայմաններից» և «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի վերջնական տարբերակում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
17.	ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով	<p>Ծրագրային դասիչը - Տեղեկատվական ծառայություններ և հասարակության հետ կապեր</p> <p>Որակական ցուցանիշ - Վեր կայքի թարմացումներ 10 հատ</p> <p>Ժամկետայնություն- Շաբաթական</p>	<p>Որակական ցուցանիշ - «Վեր կայքի թարմացումներ 10 հատ» չի ընդունվել, քանի որ կախված քաղաքական իրավիճակից, խախտումների վերաբերյալ որոշումների ընդունումից և հայտարարությունների տարաբնույթ լինելուց, հնարավոր չէ ստույգ կանխատեսել վեր կայքում թարմացումների քանակը: «Տեղեկատվական ծառայություններ և հասարակության հետ կապեր բաժնում Մարդու իրավունքներին վերաբերող տեղեկատվական նյութերի տեղակայում ինտերնետային կայքում – 540» քանակական ցուցանիշից հետո ավելացվել է՝</p> <p>«Որակական ցուցանիշ - Վեր կայքի պարբերաբար թարմացումներ, ժամկետայնություն- Շաբաթական»:</p>
18.	ՀՀ Ազգային ժողովի	Ծրագրային դասիչը - 1060 ԱԾ02 Ծրագրային դասիչը:	Որակական ցուցանիշ - ընդունվել է և «ՀՀ 2015

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Առաջարկության դիրքորոշումը»
	Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով	Վերապատրաստման ծառայություններ: Քանակական ցուցանիշ - 30 Որակական ցուցանիշ - Մասնակիցների գիտելիքի նախնական և վերջնական գնահատում, որի արդյունքում 90%-ով բարձրացել է մասնակիցների գիտելիքներն ու կարողությունները:	Թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի վերջնական տարբերակում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
19.	ՀՀ Ազգային ժողովի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողով	Մարզերում կրթության ոլորտում կատարված ծախսերի արդյունավետությունը գնահատելու նպատակով ներկայացվում են բյուջետային ցուցանիշներ՝ 2015թ. մարզերի բյուջեներում ներառելու նպատակով: Ցուցանիշները կազմվել են հանձնաժողովի կողմից 2014թ. կատարված վերլուծության հիման վրա: Ուսումնասիրվել են նաև կրթության բնագավառում մարզպետների կողմից ներկայացված հաշվետվությունները: Առդիր 15 էջ:	Ցուցանիշների ներդրումը կպահանջի որոշակի ժամանակահատված՝ կապված ինչպես ՀՀ մարզերում միասնական տեղեկատվական բազայի ստեղծման, այնպես էլ ծրագրերի ներկայացման ձևաչափի լրամշակման հետ: Միաժամանակ, նոր ցուցանիշների ներառումը բյուջետային փաստաթղթերում ենթադրում է այդ ցուցանիշների գծով հստակ պատասխանատվությունների սահմանում, ներառյալ պլանավորումը, համապատասխան վիճակագրության վարումը և մոնիթորինգի իրականացումը, ցուցանիշների ապահովումը, հաշվետվողականությունը և շեղումների հիմնավորումը: Ուստի հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների բյուջետային գործընթացի շրջանակներում:
20.	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի,	Առաջարկում ենք հատկացնել հավելյալ 22.620 մլն դրամ 10 սոցիալական պաշտպանության ոլորտի բաժնի 04 խմբի 01 դասի՝ «Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրին: ՀՀ կառավարության որդեգրած «Ներառական կրթու-	Հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	<p>երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով</p> <p>ՀՀ Ազգային ժողովի առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով</p>	<p>թյան ռազմավարության», ինչպես նաև «Երեխաների և դեռահասների առողջության և զարգացման ռազմավարության» շրջանակներում հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար նախակրթական պայմանների ստեղծման և բարելավման նպատակով Երևանի Մալաթիա Սեբաստիա համայնքի թիվ 92 նախադպրոցական ուսումնական հաստատությունում ստեղծվում է ներառական խմբերի և ցերեկային խնամքի կենտրոն, որի ստեղծման իրականացմանը մասնակցություն են ցուցաբերում ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը, ինչպես նաև «Արաբկիր» բժշկական համալիր - Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտը, «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամը և «ՔՐՈՆԻՄԵՏ» բարեգործական հիմնադրամը: Նշենք, որ «ՔՐՈՆԻՄԵՏ» բարեգործական հիմնադրամը ներդրել է 100,0 մլն դրամ, «Արաբկիր» բժշկական համալիր -Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտը և «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամը՝ 15,0 մլն դրամ, Երևանի քաղաքապետարանը՝ 28.0 մլն դրամ: Առաջարկում ենք հատուկ կարիքներ ունեցող երեխաների ցերեկային խնամքի կենտրոնի գործունեության ֆինանսավորման համար «Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության</p>	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Ճառայություններ» ծրագրին հատկացնել հավելյալ 22.620 մլն դրամ:	
21.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Վահրամ Բաղդասարյան	Վանաձոր քաղաքի Խնձորուտ-Բազում թաղամասի գերեզմանոց տանող մի հատվածի, գերեզմանոցի նախահրապարակի և այն գերեզմանոցին կապող ընդհանուր մակերեսով ճանապարհահատվածների վերանորոգում՝ /4650 քմ / - 61 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Խնձորուտ-Բազում թաղամասի գերեզմանոց տանող մի հատվածի, գերեզմանոցի նախահրապարակի և այն գերեզմանոցին կապող ճանապարհահատվածների վերանորոգման նպատակով նախատեսվել է 61.0 մլն դրամ, որը ներառված է «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N° 1 հավելվածի N° 13 աղյուսակի 04 բաժնի 05 դասի 01 խմբի «01. Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրի «1.4. Այլ ճանապարհների» գծով նախատեսված գումարում:
22.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Վահրամ Բաղդասարյան	Վանաձորի Ներսիսյան թաղամասի թիվ 31 նախադպրոցական ուսումնական Հաստատություն ՀՈԱԿ-ի շենքի կապիտալ հիմնանորոգում - 60 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամասի թիվ 31 նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի հիմնանորոգման նպատակով նախատեսվել է 60.0 մլն դրամ:
23.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գագիկ Մելիքյան	Ք. Երևան թիվ 22 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի դասասենյակների և սանհանգույցների համար - 70 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի դասասենյակների և սանհանգույցների վերանորոգման նպատակով նախատեսվել է 70.0 մլն դրամ:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
24.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Արթուր Ստեփանյան	Ք. Երևան թիվ 44 դպրոցի դահլիճի և ընդհանուր դպրոցի հիմնանորոգում – 44.8 մլն ՀՀ դրամ:	Երևանի թիվ 44 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման III փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
25.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Արթուր Ստեփանյան	Ք. Երևան թիվ 158 մանկապարտեզ ՀՈԱԿ – 33 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
26.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Արթուր Ստեփանյան	Ք. Երևան թիվ 159 մանկապարտեզ ՀՈԱԿ – 48.8 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
27.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցու-	Ք. Երևան թիվ 160 մանկապարտեզ ՀՈԱԿ – 65.3 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	թյուն Արթուր Ստեփանյան		
28.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Արթուր Ստեփանյան	Ք. Երևան թիվ 158 մանկապարտեզ ՀՈԱԿ – 33 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
29.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Ռուզաննա Մուրադյան	Գր. Զոհրապի անվան թիվ 43 ավագ դպրոցի կիսատ մնացած վերանորոգման աշխատանքների ավարտին հասցնելու և դպրոցի նկուղային հարկը վերանորոգելու համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Երևանի Գր. Զոհրապի անվան թիվ 43 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
30.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Մնացական Մնացականյան	Կապված Հյուսիս-հարավ ավտոճանապարհի Աշտարակ-Թալին հատվածի շինարարության ընթացքում առաջանում է երթևեկության կազմակերպման դժվարություններ, իսկ ձմռան ընթացքում առավել ևս դժվարանում է ճանապարհի պահպանումը, ուստի հրատապ ենք համարում, որպես շրջանցող ճանապարհի շարունակել Թալին-Քարակերտ	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Մ9 միջպետական ավտոճանապարհի վերանորոգման աշխատանքները՝ 19 կմ-ից վերանորոգվել է 8 կմ և անհրաժեշտ է վերանորոգել մնացած 11 կմ-ը:	
31.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Սուքիաս Ավետիսյան	Գյումրի քաղաքի Անտառավան 3 թաղ. 26 շենքը 1988 թվականի ավերիչ երկրաշարժի արդյունքում վնասվելուց հետո գտնվում է վթարային 3-րդ աստիճանում և ունի վերանորոգման անհրաժեշտություն – 400 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Հայաստանի Հանրապետությունում առկա են 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող թվով 450 բազմաբնակարան շենքեր, որոնց վերականգնման համար, խոշորացված հաշվարկներով, կպահանջվի ավելի քան 200 մլրդ դրամ: Խնդրի լուծումը պահանջում է ծրագրային մոտեցում:
32.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Սուքիաս Ավետիսյան	Գյումրու Կարա-Մուրզայի պետական երաժշտական քոլեջ ՊՈԱԿ-ում ջեռուցման համակարգ անցկացնելու համար – 4 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջի ջեռուցման համակարգի անցկացման նպատակով նախատեսվել է 4.0 մլն դրամ:
33.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Սուքիաս Ավետիսյան	M1 – Հայրենյաց-Հայկասար-Տուֆաշեն-Հ 21 10կմ երկաթուղայամբ ճանապարհահատվածի ավազակոպչային տարբերակով երթևեկելի դարձնելու համար – 120 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
34.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Սուքիաս Ավետիսյան	Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի թիվ 2 միջն. դպրոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջ-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	տական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Հակոբ Ռ. Հակոբյան	փաստաթղթերը կազմելու համար – 15.0 մլն ՀՀ դրամ:	Նական տարբերակում ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նպատակով նախատեսվել է 15.0 մլն դրամ:
35.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Հակոբ Ռ. Հակոբյան	Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի թիվ 2 միջն. դպրոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելու համար – 15.0 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նպատակով նախատեսվել է 15.0 մլն դրամ:
36.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Հակոբ Ռ. Հակոբյան	Գեղարքունիքի մարզի Աստղածոր համայնքի միջն. դպրոցի վերանորոգման աշխատանքների համար – 200.0 մլն ՀՀ դրամ:	ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղածոր համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: 2007-2012 թվականներին իրականացվել են 189.8 մլն դրամի հիմնանորոգման աշխատանքներ: 2014 թվականին իրականացվում են դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները՝ 72.1 մլն դրամի: Դպրոցի շենքը փաստացի վիճակով հանձնվել է տևական շահագործման, իսկ վերակառուցման աշխատանքների իրականացման հնարավորության

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժրջանակներում:
37.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Հակոբ Ռ. Հակոբյան	Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի միջն. դպրոցի վերանորոգման աշխատանքների համար – 200.0 մլն ՀՀ դրամ:	ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: 2007-2013 թվականներին իրականացվել են 268.7 մլն դրամի հիմնանորոգման աշխատանքներ: Այնուհետև օբյեկտը վերանախագծվել է և վերանախագծված նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսվում է իրականացնել մեծ քանակի կազմաքանդման և կոնստրուկտիվ նոր լուծումներով համակարգերի կառուցման աշխատանքներ, որի նախահաշվային արժեքը կազմում է 1,267.5 մլն դրամ: Դպրոցի շենքը փաստացի վիճակով հանձնվել է տևական շահագործման, իսկ վերակառուցման աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժրջանակներում:
38.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Հակոբ Ռ. Հակոբյան	Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի թիվ 2 միջն. դպրոցի վերանորոգման աշխատանքների համար – 200.0 մլն ՀՀ դրամ:	ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի թիվ 2 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: 2008-2013 թվականներին իրականացվել են 314.2 մլն դրամի հիմնանորոգման աշխատանքներ: Այնուհետև օբյեկտը վերանախագծվել է և վերանախագծված նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսվում է իրականացնել մեծ քանակի կազմաքանդման և կոնստրուկտիվ նոր լուծումներով համակարգերի կառուցման աշխատանքներ, որի նախահաշվային արժեքը կազմում է 1,270.0 մլն դրամ: Դպրոցի շենքը փաստացի վիճակով հանձնվել է տևական շահագործման, իսկ վերակառուցման աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժ շրջանակներում:</p>
39.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Հակոբ Ռ. Հակոբյան</p>	<p>Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի դպրոցի վերանորոգման աշխատանքների համար – 200.0 մլն ՀՀ դրամ:</p>	<p>ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: 2006-2013 թվականներին իրականացվել են 266.0 մլն դրամի հիմնանորոգման աշխատանքներ: Այնուհետև օբյեկտը վերանախագծվել է և վերանախագծված նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսվում է իրականացնել մեծ քանակի կազմաքանդման և</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>կոնստրուկտիվ նոր լուծումներով համակարգերի կառուցման աշխատանքներ, որի նախահաշվային արժեքը կազմում է 1,139.2 մլն դրամ:</p> <p>Դպրոցի շենքը փաստացի վիճակով հանձնվել է տևական շահագործման, իսկ վերակառուցման աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժրջանակներում:</p>
40.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն</p> <p>Կարինե Աճեմյան</p>	<p>Ք. Երևանի թիվ 153 հիմնական դպրոցի մասնակի հիմնանորոգում – 70 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Երևանի Ռ. Իշխանյանին անվան թիվ 153 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման II փուլի աշխատանքների ցանկում: Դպրոցի ամբողջական վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերով՝ աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 1,234.4 մլն դրամ:</p> <p>Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժրջանակներում:</p>
41.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն</p> <p>Հայկ Գրիգորյան</p>	<p>Ք. Գորիսի ծայրահեղ ծանր վիճակում գտնվող Ավանգարդ թաղամասի ասֆալտապատում – 50 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է:</p> <p>ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Ավանգարդ թաղամասի ասֆալտապատման նպատակով նախատեսվել է 50.0 մլն դրամ, որը ներառված է «Հայաստանի Հանրապետության 2015</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի № 1 հավելվածի № 13 աղյուսակի 04 բաժնի 05 դասի 01 խմբի «01. Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրի «1.4. Այլ ճանապարհների» գծով նախատեսված գումարում:
42.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Արմեն Կարապետյան	«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ին հատկացնել ընդհանուր 60 մլն ՀՀ դրամ, որից՝ <ul style="list-style-type: none"> • Թվով 102 միավոր պատուհաններ /յուր. 5.4 քմ/ - 18 մլն ՀՀ դրամ • Սպորտ դահլիճի և հանդիսությունների դահլիճի տանիք /700 քմ/ վերանորոգում – 15 մլն ՀՀ դրամ • Սպորտ դահլիճի հատակը /400քմ/ - 10 մլն ՀՀ դրամ • Ուսումնական հնամաշ գույքի ամբողջովին թարմացում – 17 մլն ՀՀ դրամ 	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Կապանի պետական բժշկական քոլեջի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
43.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Արմեն Կարապետյան	Սյունիքի մարզի Կապան քաղաքի Արվեստի դպրոց ՊՈԱԿ-ի կապիտալ վերանորոգման համար – 62 մլն ՀՀ դրամ:	ՀՀ Սյունիքի մարզի Կապանի արվեստի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾԾ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			շրջանակներում:
44.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Կարինե Պողոսյան	Արարատի մարզի Արտաշատ քաղաքի փողոցի ջրահեռացման, խողովակների փոխման և ասֆալտապատման համար /8000 քմ / - 120 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի փողոցի ջրահեռացման, խողովակների փոխման և ասֆալտապատման նպատակով նախատեսվել է 120.0 մլն դրամ, որը ներառված է «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի № 1 հավելվածի № 13 աղյուսակի 04 բաժնի 05 դասի 01 խմբի «01. Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրի «1.4. Այլ ճանապարհների» գծով նախատեսված գումարում:
45.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Առաքել Մովսիսյան	Նորակերտի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում - 47.0 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման նպատակով նախատեսվել է 47.0 մլն դրամ:
46.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Առաքել Մովսիսյան	Արմավիրի մարզ, Նորակերտից մինչև Փարաքար ճանապարհի ասֆալտապատում - 8կմ - 400 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
47.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցու-	Արմավիրի մարզ, գյուղ Լուկաշեն - 5 կմ երկարությամբ ճանապարհի վերանորոգում - 200 մլն դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	թյուն Ալեքսան Պետրոսյան		ծախսերի առաջնահերթությունից:
48.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Ալեքսան Պետրոսյան	Արմավիրի մարզ, գյուղ Բամբակաշատի մշակույթի տան հիմնանորոգում - 80 մլն:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման նպատակով նախատեսվել է 80.0 մլն դրամ:
49.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Ալեքսան Պետրոսյան	ք. Արմավիր - ցանկացած մանկապարտեզի վերանորոգում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
50.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Վահրամ Բաղդասարյան Մանվել Գրիգորյան	Էջմիածին քաղաքի թիվ 14 մանկապարտեզի վերանորոգում – 181 637 900 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նպատակով մարզերի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման շրջանակներում ՀՀ 2012թ-ի պետական բյուջեից հատկացվել է 14.3 մլն դրամ:
51.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Վահրամ Բաղդասարյան Մանվել Գրիգորյան	Էջմիածին քաղաքի թիվ 2 երաժշտական դպրոցի վերանորոգում – 179 304 800 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի թիվ 2 երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
52.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Վահրամ Բաղդասարյան Մանվել Գրիգորյան	Էջմիածին քաղաքի մշակույթի պալատի ուսումնական մասնաշենքերի վերանորոգում 87,441.5 դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի մշակույթի պալատի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
53.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Վահրամ Բաղդասարյան Մանվել Գրիգորյան	Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցում – 230 մլն դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման նպատակով նախատեսվել է 230.0 մլն դրամ:
54.	«Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն	Էջմիածնի շրջանի Մեծամոր գյուղի մանկապարտեզի վերակառուցում – 57 191.89 հազ. դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
116.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահրամ Մկրտչյան	<p>Արագածոտնի մարզի Վարդաբլուր գյուղը գտնվում է ծովի մակարդակից 2075 մ բարձրության վրա: Գյուղն ունի 135 տնտեսություն և 466 բնակիչ: ՀՀ անկախացումից հետո, գյուղի ենթակառուցվածքների վերանորոգման համար ընդհանրապես ներդրումներ չեն արվել: Գյուղն ունի խմելու և ոռոգման ջրի խնդիր: Գյուղը մայրուղուն կապող ճանապարհը շուրջ 30 տարի ընդհանրապես չի վերանորոգվել և գրեթե անանցանելի է: Ամռան ամիսներին բնակիչները երթևեկում են ցանքատարածությունների միջով: Մարդիկ ուրախությամբ են սպասում ձմռան գալուն, որպեսզի ձյունը հարթեցնի ճանապարհի անանցանելի փոսերը և ճանապարհը երթևեկելի դառնա: Ճանապարհի երկարությունը 1800 մետր է, որի վերանորոգման նախահաշվային արժեքը կազմում է մոտ 70.0 մլն դրամ:</p> <p>Հաշվի առնելով վերը նշվածը առաջարկում եմ նշված ճանապարհի վերանորոգման աշխատանքներն ընդգրկել ՀՀ 2015թ. պետական բյուջեի նախագծում</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		հատկացնելով 70.0 մլն դրամ:	
117.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	<p>Արարատի մարզում առկա են լուրջ հիմնախնդիրներ՝ կապված մի շարք կրթական և մշակութային օբյեկտների անբարվոք և շահագործման տեսանկյունից ոչ այնքան պիտանի վիճակի հետ:</p> <p>Հաշվի առնելով Արարատի մարզում կրթական և մշակութային օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և արդիականացման աշխատանքների անհրաժեշտությունն ու կարևորությունը տեղի բնակչության սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում առաջարկում եմ ՀՀ 2015թ. պետական բյուջեի նախագծում ներառել ՀՀ Արարատի մարզի Ավշար համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը:</p> <p>Ծրագրի արժեքը կազմում է 50 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է:</p> <p>ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արարատի մարզի Ավշար համայնքի մշակույթի տան հիմնանորոգման նպատակով նախատեսվել է 50.0 մլն դրամ:</p>
118.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	<p>ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքն ունի 4527 բնակիչ: Առկա են մեկ հանրակրթական դպրոց, մեկ մուր-մանկապարտեզ և մեկ մշակույթի տուն: Մուր-մանկապարտեզում հաճախում են շուրջ 124 երեխաներ: Այգավան համայնքի մուր-մանկապարտեզը գտնվում է ծայրահեղ անբարվոք վիճակում: Չի գործում մանկապարտեզի սանհանգույցը, չկան տարրական պայմաններ երեխաների սանիտարա-հիգիենիկ պայմաններն ապահովելու համար, վերանորոգման ենթակա են ճաշարանը, ննջասենյակները, խաղահրապարակը, շենքի տանիքը: Չի գործում շենքի ջեռուցման համակարգը, որի պատճառով մանկապարտեզի աշխատանքները նոյեմբերից մինչև</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ապրիլ ամիսները դադարեցվում են:</p> <p>Հաշվի առնելով տվյալ մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը համայնքի համար՝ խնդրում եմ 2015թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը:</p> <p>Ծրագրի արժեքը կազմում է 30 մլն ՀՀ դրամ:</p>	
119.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)</p>	<p>Խնդիրը կապված է ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղի համայնքի մանկապարտեզի հետ: Համայնքն ունի 2-6 տարեկան 45 երեխա, որոնք պետք է հաճախեն մանկապարտեզ:</p> <p>Մանկապարտեզի շենքը կառուցվել է 1960-ական թվականներին և մինչև 1998թ. վերանորոգման չի ենթարկվել: 2013թ. մարզպետարանի կողմից կատարվել է ուսումնասիրություն տվյալ շենքի վերանորոգման համար և կազմվել է նախահաշիվ՝ 20 մլն ՀՀ դրամի չափով:</p> <p>Մարզպետարանի կողմից ըստ նախահաշվի հատկացումներն արվել են, իրականացվել են որոշակի աշխատանքներ, ապամոնտաժվել շենքի փայտից կառուցված մասը, հանվել են հին փայտյա դռներն ու լուսամուտները, քանդվել են որոշ միջնապատեր:</p> <p>Հատկացված ֆինանսական միջոցները սակայն չեն բավականացրել և աշխատանքները դրանով իսկ դադարեցվել են և մնացել անավարտ:</p> <p>Հաշվի առնելով տվյալ մանկապարտեզի հիմնանորոգ-</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ման աշխատանքների վերսկսման անհրաժեշտությունը՝ խնդրում են 2015թ. պետական բյուջեի նախագծում ներառել ՀՀ Արարատի մարզի Նոր Ուլի համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների վերսկսման և իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 20 մլն ՀՀ դրամ:	
120.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	2013թ-ին հանդես են եկել առաջարկությամբ՝ 2014թ. պետական բյուջեի ծրագրում ներառելու Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: Կառավարության կողմից առաջարկությունը չի ընդունվել: Խնդիրը կապված է Արարատի մարզի Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի հետ, որի տանիքը գտնվում է ծայրահեղ վատ վիճակում և ակնհայտ է, թե անձրևաջրերի ինչպիսի հոսք կարող է տեղի ունենալ տվյալ մանկապարտեզում: Մանկապարտեզը սպասարկում է մեծ թվով ընտանիքների երեխաների: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ հարցի լուծման համար պահանջվում է անհապաղ պետական օժանդակություն՝ խնդրում են 2015թ. պետական բյուջեի նախագծում ներառել ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 39,993.50 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
121.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	<p>Դեռևս 2012թ-ից իմ կողմից արվել են առաջարկություններ ՀՀ 2013 և 2014թթ. -ի պետական բյուջեի ծրագրում ընդգրկելու Ավշար-Նոյակերտ, Ավշար-Այգավան-Եղեգնավան միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքները: Կառավարության կողմից առաջարկվել է հարցը քննարկել 2014-2016թթ. ՄԺԾժ շրջանակներում, իսկ այնուհետև այն չի ընդունվել:</p> <p>Արարատի մարզում միջհամայնքային ճանապարհները ներկայումս գտնվում են անբարվոք վիճակում, որը լուրջ խնդիր է առաջացնում բնակիչների համար: Տվյալ դեպքում խիստ կարևոր է Ավշար-Նոյակերտ, Ավշար-Այգավան-Եղեգնավան միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրականացումը, որը ներկայումս չի ապահովում նույնիսկ անցանելիության համար նվազագույն պահանջները: Տվյալ համայնքների համար այն կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում և կենսական նշանակություն ունի նրանց միջև կապ հաստատելու և ներկայումս ստեղծված ճանապարհային բարդություններից խուսափելու համար:</p> <p>Կարևորելով Արարատի մարզի մի շարք համայնքներում սոցիալ-տնտեսական ենթակառուցների վերանորոգման, ինչպես նաև վերը նշված համայնքների միջև առկա ճանապարհային հատվածի բարեկարգման խիստ անհրաժեշտությունը՝ խնդրում եմ 2015թ. պետական բյուջեի նախագծում</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է:</p> <p>ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արարատի մարզի Ավշար-Նոյակերտ, Ավշար-Այգավան-Եղեգնավան միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատման նպատակով նախատեսվել է 50.0 մլն դրամ, որը ներառված է «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի № 1 հավելվածի № 13 աղյուսակի 04 բաժնի 05 դասի 01 խմբի «01. Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրի «1.4. Այլ ճանապարհների» գծով նախատեսված գումարում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ներառել ՀՀ Արարատի մարզի Ավշար-Նոյակերտ, Ավշար-Այգավան-Եղեգնավան միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների իրականացման ծրագիրը:</p> <p>Ծրագրի արժեքը կազմում է 50,000.398 հազ. ՀՀ դրամ:</p> <p>Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից:</p>	
122.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (Օ18 ընտրատարածք)</p>	<p>Դեռևս 2013թ-ին իմ կողմից կառավարությանն արվել է առաջարկություն 2014թ. բյուջեի նախագծում ընդգրկելու Եղեգնավան և Այգավան համայնքների ճանապարհների ասֆալտապատման աշխատանքները: Առաջարկությունը չի ընդունվել ելնելով ՀՀ 2014 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p> <p>Արարատի մարզի Եղեգնավան-Այգավան միջհամայնքային ճանապարհը ներկայումս գտնվում է անմխիթար և անանցանելի վիճակում: Այն կենսական նշանակություն ունի համայնքների համար և հանդիսանում է միջհամայնքային կարևորագույն ճանապարհներից մեկը և միաժամանակ առավել կարճ ճանապարհ է բացում թե համայնքների միջև, և թե դեպի ք. Վեդի, որտեղ տեղակայված են մի շարք պետական և համայնքային կառույցներ:</p> <p>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ ճանապարհը ներկայումս գտնվում է անանցանելի վիճակում և համայնքների համար ունի կենսական</p>	<p>Մարզերի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման շրջանակներում Այգավան-Եղեգնավան ճանապարհում ասֆալտապատման աշխատանքներ իրականացնելու նպատակով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից հատկացվել է 42.1 մլն դրամ:</p> <p>Լրացուցիչ միջոցների հատկացումը հնարավոր չէ՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>նշանակություն՝ խնդրում եմ 2015թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան-Այգավան միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների իրականացման ծրագիրը:</p> <p>Ծրագրի արժեքը կազմում է 174,158.974 հազ. ՀՀ դրամ:</p> <p>Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից:</p>	
123.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)</p>	<p>Արարատի մարզի Սիսավան համայնքն ունի մոտ 2500 բնակչություն, 3-5 տարեկան 128 երեխա, որոնք մանկապարտեզ հաճախելու կարիք ունեն: Խնդիրը կապված է հենց նրա հետ, որ համայնքը չունի մանկապարտեզ և այդ երեխաները որևէ կերպ չեն կարող օգտվել մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից: Բնակիչներից միայն 13 ընտանիք է կարողացել իրենց երեխաներին տեղավորել այլ համայնքների մանկապարտեզներում: Հրատապ հարց է դարձել, որ համայնքն ունենա թեկուզև փոքր մանկապարտեզ և կարողանա սպասարկել բնակիչներին:</p> <p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ հարցի լուծման համար պահանջվում է պետական օժանդակություն, ինչպես նաև կարևորելով Սիսավան համայնքի մանկապարտեզ ունենալու խիստ անհրաժեշտությունը՝ խնդրում եմ 2015թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Սիսավան համայնքում մանկապարտեզ կառուցելու</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 145.517.82 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից:	
124.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (Օ18 ընտրատարածք)	Դեռևս 2010թ-ից իմ կողմից կառավարությանն արվել են առաջարկություններ՝ բյուջեի նախագծում ընդգրկելու Ուրցածորի միջնակարգ դպրոցի վերակառուցման աշխատանքների ծրագիրը: Ի պատասխան կառավարությունը խոստացել է քննարկել հարցը ՀՀ 2012-2014 թթ և այնուհետև 2014-2016 թթ ՄԺԾժ շրջանակներում: Նույն առաջարկն արվել է նաև 2013թ.-ին՝ ՀՀ 2014թ. Պետական բյուջեի նախագծում ներառելու համար: Կառավարությունն այն մերժել է՝ պատճառաբանելով, որ տվյալ ծրագիրը ներառված չէ ՀՀ կառավարության 18.07.2013թ.-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկին հավանություն տալու մասին» N-28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դպրոցի համար վերը նշված աշխատանքների իրագործումն ունի կենսական նշանակություն և պահանջում է հրատապ լուծում՝ խնդրում եմ 2015թ. պետական բյուջեի նախագծում ներառել ՀՀ Արարատի մարզի գ. Ուրցածորի միջնակարգ դպրոցի վերակառուցման աշխատանքների ծրագիրը: Առաջարկության իրացման արդյունքում հնարավոր է նաև իրականացնել	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արարատի մարզի Ուրցածորի միջնակարգ դպրոցի վերակառուցման նպատակով նախատեսվել է 40.3 մլն դրամ:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		շարունակական ֆինանսավորման մեխանիզմ: Ծրագրի արժեքը կազմում է 40,254.24 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից:	
125.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	Արարատի մարզի Վեդի քաղաքի ճանապարհները գտնվում են խիստ անբարեկարգ վիճակում: Դրանց շարքում առանձնապես ծանր վիճակում են գտնվում Վեդի քաղաքի Թումանյան փողոցի, Կասյան, Գայի, Արարատյան անցուղի փողոցների երթևեկելի հատվածները, որոնք կապող օղակ են հանդիսանում քաղաքի տարբեր հատվածների հետ և գտնվում են ծայրահեղ անբարեկարգ և անանցանելի վիճակում: Խնդրում եմ 2015թ. պետական բյուջեի նախագծում ներառել ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Թումանյան փողոցի լայնանցում N 15 շենքի մոտ և Կասյան, Գայի, Արարատյան անցուղի փողոցներով N 2 դպրոցի մոտեցումների երթևեկելի մասի վերանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 38,829,6 հազ. ՀՀ դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Թումանյան փողոցի լայնանցում N 15 շենքի մոտ և Կասյան, Գայի, Արարատյան անցուղի փողոցներով N 2 դպրոցի մոտեցումների երթևեկելի մասի վերանորոգման նպատակով նախատեսվել է 38.8 մլն դրամ, որը ներառված է «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի № 1 հավելվածի № 13 աղյուսակի 04 բաժնի 05 դասի 01 խմբի «01. Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրի «1.4. Այլ ճանապարհների» գծով նախատեսված գումարում:
126.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզների վերանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
127.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Հաղարծին համայնքի խմելու ջրի ջրամբարի վերանորոգման նպատակով /ծավալը 500տն., ծրագրի մոտավոր արժեքը 10մլն 500 հազար ՀՀ դրամ/:	«Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի միջոցների հաշվին 2014 թվականին շահագործման է հանձնվել համայնքի խմելու ջրի 300խ/մ հզորությամբ ՕԿԶ (օրվա կարգավորիչ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ջրամբար):
128.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Հաղարծին համայնքի հեռագնա արոտներ տանող ճանապարհների վերանորոգման նպատակով՝ 25 կմ. երկարությամբ /ծրագրի մոտավոր արժեքը 12 մլն ՀՀ դրամ/:	Համաշխարհային բանի աջակցությամբ 2015 թվականից կիրականացվի «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ վարկային ծրագիրը, որի շրջանակներում կդիտարկվի ՀՀ Տավուշի մարզի Հաղարծին համայնքի ծրագրում ընգրկվելու հարցը և ծրագրի չափորոշիչներին համապատասխանության դեպքում կքննարկվի Հաղարծին համայնքի հեռագնա արոտներ տանող ճանապարհների վերանորոգման հարցը:
129.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Թեղուտ համայնքի համայնքային կենտրոնի հիմնանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Տավուշի մարզի Թեղուտ համայնքի համայնքային կենտրոնի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
130.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Թեղուտ համայնքի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի հիմնանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Մարզերի հրատապ լուծում պահանջող

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			հիմնախնդիրների լուծման շրջանակներում Թեղուտ համայնքի ջրագծի ներքին ցանցի վերակառուցման նպատակով ՀՀ 2012թ-ի պետական բյուջեից հատկացվել է 14.3 մլն դրամ:
131.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Աղավնավանք համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգման նպատակով /12.5 կմ./:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
132.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Աղավնավանք համայնքի սարամաս տանող ճանապարհների բարեկարգման նպատակով /8 կմ./:	Համաշխարհային բանի աջակցությամբ 2015 թվականից կիրականացվի «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ վարկային ծրագիրը, որի շրջանակներում կդիտարկվի ՀՀ Տավուշի մարզի Աղավնավանք համայնքի ծրագրում ընգրկվելու հարցը և ծրագրի չափորոշիչներին համապատասխանության դեպքում կքննարկվի Աղավնավանք համայնքի սարամաս տանող ճանապարհների բարեկարգման հարցը:
133.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան համայնքի ճանապարհների վերանորոգման, խճապատման և ջրահեռացման համակարգերի տեղադրման /կիսախողովակներով/ նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
134.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան համայնքի խմելու ջրի ջրագծի կառուցման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	(041 ընտրատարածք)		ծախսերի առաջնահերթությունից:
135.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Նոյեմբերի 29-ի և Ս. Օհանյան փողոցների հիմնանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
136.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի մշակույթի տան հիմնանորոգման նպատակով:	ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման II փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի գործող վարկային միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
137.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար համայնքի միջնակարգ դպրոցի կապիտալ վերանորոգման նպատակով:	ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման II փուլի աշխատանքների ցանկում: Մարզերի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման շրջանակներում դպրոցի վերանորոգման նպատակով ՀՀ 2011թ-ի պետական

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			բյուջեից հատկացվել է 28.5 մլն դրամ: Լրացուցիչ աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
138.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար համայնքի սողանքային գոտու բնակարանատների խնդիրների լուծման նպատակով /48 տնտեսություն/:	Առաջարկությունը չի ընդունվել: Հայաստանի Հանրապետության սողանքային գոտիներում բնակվող բնակարանատերերի խնդիրների լուծումը պահանջում է ծրագրային մոտեցում:
139.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Հովք համայնքի համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման նպատակով /4կմ./:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
140.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Հովք համայնքի համայնքային կենտրոնի կառուցման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Տավուշի մարզի Հովք համայնքի համայնքային կենտրոնի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
141.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Գոշ համայնքի միջնակարգ և հիմնական դպրոցների	ՀՀ Տավուշի մարզի Գոշ համայնքի միջնակարգ և հիմնական դպրոցների հիմնանորոգման աշխատանք-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	վերանորոգման նպատակով:	ները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման համապատասխանաբար II և III փուլերի աշխատանքների ցանկերում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾ շրջանակներում:
142.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Գոշ համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
143.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 14 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
144.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի թիվ 3 մանկապարտեզի կապիտալ վերանորոգման, ջեռուցման անցկացման և գույքի ձեռքբերման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
145.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Չինարի համայնքի ոռոգման ներքին ցանցի կառուցման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	(041 ընտրատարածք)		ծախսերի առաջնահերթությունից:
146.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Չինարի համայնքի խմելու ջրի նոր ջրագծի կառուցման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Մարզերի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման շրջանակներում ՀՀ 2014թ-ի պետական բյուջեից Չինարի համայնքի խմելու ջրատարի վերանորոգման նպատակով Չինարի համայնքին տրամադրվել է 5.0 մլն դրամի պետական աջակցություն:
147.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Այգեծոր համայնքի կամուրջի հիմքերի ամրացման նպատակով:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
148.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Այգեծոր համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
149.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Չորաթան համայնքի համայնքապետարանի շենքի վերանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
150.	ՀՀ Ազգային ժողովի	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի	ՀՀ Տավուշի մարզի Չորաթան համայնքի մշակույթի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Չորաթան համայնքի մշակույթի տան հիմնանորոգման նպատակով:	տան հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման III փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի գործող վարկային միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾ շրջանակներում:
151.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Նորաշեն համայնքի համար գյուղտեխնիկայի ձեռքբերման նպատակով:	Համաշխարհային բանի աջակցությամբ 2015 թվականից կիրականացվի «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ վարկային ծրագիրը, որի շրջանակներում կդիտարկվի ՀՀ Տավուշի մարզի Նորաշեն համայնքի ծրագրում ընգրկվելու հարցը և ծրագրի չափորոշիչներին համապատասխանության դեպքում կքննարկվի Նորաշեն համայնքի համար գյուղտեխնիկայի ձեռքբերման հարցը:
152.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Նորաշեն համայնքի ջրամատակարարման ցանցերի վերակառուցման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
153.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Վ.Կ. Աղբյուր համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	(041 ընտրատարածք)		Ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Տավուշի մարզի Վերին Կարմիր աղբյուր համայնքի համայնքային կենտրոնի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
154.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Վ.Կ. Աղբյուր համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և Ծախսերի առաջնահերթությունից:
155.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքի միջնակարգ և հիմնական դպրոցների գազաֆիկացման նպատակով:	ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքի միջնակարգ և հիմնական դպրոցների հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման II փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾ շրջանակներում:
156.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Իծաքար համայնքի համար գյուղտեխնիկայի ձեռքբերման նպատակով:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ Տավուշի մարզի Իծաքար համայնքն ընգրկված է Համաշխարհային բանկի աջակցությամբ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	(041 ընտրատարածք)		իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին ծրագրում և սահմանված կարգով կլուծվի համայնքին գյուղտեխնիկայի տրամադրման հարցը:
157.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Իծաքար համայնքի համայնքային կենտրոնի կառուցման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
158.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Նավուր համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգման նպատակով:	ՀՀ Տավուշի մարզի Նավուր համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման II փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
159.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	Հատկացնել ֆինանսավորում ՀՀ Տավուշի մարզի Նավուր համայնքի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի վերանորոգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
160.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լյովա Խաչատրյան (012 ընտրատարածք)	ՀՀ 2015թ պետական բյուջեում նախատեսել 500 մլն դրամ՝ սահմանամերձ համայնքներում ծառայության մեջ գտնվող երիտասարդ ընտանիքներին սպառողական վարկերի սուբսիդավորման համար:	Նախագծով ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 23-ի N 590-Ն որոշման համաձայն նախատեսվել է 19.2 մլն դրամ, որը նախատեսվում է ուղղել ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Առաջարկությունը ստացվել է սահմանի վրա հսկողական կետերում /պոստ/ ծառայողների կողմից, ելնելով ծառայության ընթացում կոմունալ վարձերը վճարած չլինելու դեպքում ընտանիքներին հոսանքով, գազով ապահովված ունենալու մտահոգությունից:</p>	<p>կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կրտսեր, միջին, ավագ և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության միջին, ավագ և գլխավոր սպայական անձնակազմին՝ կենցաղային տեխնիկա ձեռքբերելու նպատակով տրամադրվող սպառողական վարկերի տոկոսագումարները 2 կամ 3 տոկոսային կետով համաֆինանսավորելու նպատակով:</p>
161.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության</p>	<p>Արդեն 10 տարի է, ինչ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղը գործում է ներկայիս շենքում, և 10 տարի է, ինչ այդտեղ որևէ վերանորոգում տեղի չի ունեցել: Բարերարների օգնությամբ ինչ-ինչ բարելավումներ են իրականացվել, սակայն հիմնանորոգման համար անհրաժեշտ մոտ 25 մլն դրամի տրամադրումը նրանց ուժերից վեր է: Հիմնական խնդիրը հատակն է, որն արդեն այնքան վատ վիճակում է, որ դրա վրայով քայլելիս հաճախ վայր են ընկնում, խնդրահարույց է էլեկտրական լուսավորության բացակայության կամ անսարքության հարցը, ինչպես նաև սենյակների մեղմ ասած անհրապույր, երբեմն նաև կիսավեր վիճակը: Անձամբ այցելել եմ շենք ու ականատես եղել այդ փաստերին, իսկ նման պայմաններում որակյալ բարձրագույն կրթություն ապահովելու մասին խոսելն անգամ ավելորդ է: Վանաձորի մասնաճյուղը նաև կարևոր է այն առումով, որ ուսանողները չեն մեկնում Երևան, այլ մնում են</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի հիմնանորոգման նպատակով նախատեսվել է 25.0 մլն դրամ:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>սովորելու Վանաձորում, ինչը, ներքին արտագաղթը կանխող, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացման և ապակենտրոնացման համար կարևոր նշանակություն ունի:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով 25 մլն դրամ հատկացնել Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի շենքի հիմնանորոգման համար:</p> <p>Կից ուղարկում եմ վերանորոգման ծախսերի նախահաշիվը:</p>	
162.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության	<p>Հայաստանի Հանրապետության «Գեղագիտության ազգային կենտրոնի» Վանաձորի մասնաճյուղը բացվել է 1984 թվականին և առ այսօր գործում է՝ կատարելով իր հայրենանվեր առաքելությունը՝ կրթում մատաղ սերնդին, սովորեցնում ու պահպանում հայկական մշակույթի բազմաթիվ ճյուղեր: Բացի գիտակրթական կենտրոնից, այն նաև մանկական միջոցառումների, մրցույթների ու քաղաքի նկարիչների ցուցահանդեսների հաճախակի կազմակերպման վայրն է:</p> <p>Այս ամենի հետ մեկտեղ, ավելի քան մեկդարյա պատմություն ունեցող շենքն այժմ ունի վերանորոգման կարիք. փտում են տանիքի փայտե բազրիքները՝ վտանգելով շինությունն ու դրա մեջ գտնվող անձնաց</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է:</p> <p>ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում Հայաստանի Հանրապետության «Գեղագիտության ազգային կենտրոնի» Վանաձորի մասնաճյուղի հիմնանորոգման նպատակով նախատեսվել է 19.8 մլն դրամ:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>կյանքն ու առողջությունը. անձամբ այցելել եմ կենտրոն ու ականատես եղել, որ հատակը, պատերը, դռներն ու պատուհաններն անմխիթար վիճակում են:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով 19.839.000 դրամ հատկացնել «Գեղազիտության ազգային կենտրոնի» Վանաձորի մասնաճյուղի հիմնանորոգման աշխատանքների համար:</p> <p>Կից ներկայացնում եմ վերանորոգման ծախսերի նախահաշիվը:</p>	
163.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյան	<p>Վանաձոր քաղաքի 3-րդ աստիճանի վթարային Աղայան 65 շենքի վիճակը նախորդ և ընթացիկ տարիներին ավելի է վատթարացել: Բնակիչները դիմել են տեղական, մարզային և կենտրոնական իշխանություններին, որպեսզի նրանք ընթացք տան նշված խնդրին: Շենքի բազալտե հիմնաքարերը թափվելու և պատերի ճաքերը լայնանալու կապակցությամբ շենք են այցելել Վանաձորի բնակավարչության պետ պարոն Պառավյանը և ճարտարապետ պարոն Ղուկասյանը: Քանի որ վերջիններս հայտնել էին, որ շենքն անհրաժեշտ է ենթարկել տեխնիկական զննության, հովիսին բնակիչները դիմել են «Հայսեյսմձին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ, որի կողմից 2013 թվականի հուլիսի 29-ին տրված եզրակացության համաձայն՝ շենքի կոնստրուկցիաների տեխնիկական վիճակն ընդհանուր</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում առկա են 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող թվով 450 բազմաբնակարան շենքեր (այդ թվում՝ 93-ը ՀՀ Լոռու մարզում), որոնց վերականգնման համար, խոշորացված հաշվարկներով, կպահանջվի ավելի քան 200 մլրդ դրամ: Խնդրի լուծումը պահանջում է ծրագրային մոտեցում:</p> <p>Ինչ վերաբերում է Երևան համայնքին ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված 2 մլրդ դրամի աջակցությանը, ապա նշված գումարը նախատեսված է ոչ թե 3-րդ կարգի</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
		<p>առձամբ գնահատվում է անբավարար և վնասվածության մակարդակը դասվում է 3-րդ աստիճանի: «Շենքը ենթակա է ընդհանուր ուժեղացման-վերակառուցման: Մինչև շենքի ընդհանուր ուժեղացումը հրատապ անհրաժեշտ է ապահովել արևմտյան երկայնական պատի կայունությունը՝ իրականացնելով հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> – սկսած հիմքի վերին շուրթից մինչև պատուհանատակերն իրականացնել ոչ պակաս 25 սմ հաստությամբ բետոնե պատ; – պատն իրականացնել հաջորդական հատվածամասերով՝ հանելով թուլացած քարերը; – կառուցվող բետոնե պատը խարսխաձողերով ամրակապել պատի պահպանվող շարվածքի հետ՝ օգտագործելով ցնցում չառաջացնող գործիքներ:» <p>Բնակիչների հերթական գրությանը քաղաքաշինության նախարարությունը պատասխանել է, որ շենքի վերականգնման և ուժեղացման աշխատանքները կարող են իրականացվել միայն նման 84 շենքերին ուղղված ծրագրի շրջանակում, ինչը պայմանավորված է ֆինանսական միջոցների առկայությամբ:</p> <p>Այս խնդրի կապակցությամբ անձամբ դիմել եմ նախկին կառավարությանը, սակայն ստացել եմ նույն պատասխանը, մինչդեռ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով 2 մլրդ դրամ է հատկացվում Երևան քաղաքում 3-րդ կարգի վթարային շենքերի նորոգման աշխատանքներին՝ հերթական անգամ անտեսելով արդեն 26 տարի երկրաշարժի սպիները կրող աղետի</p>	<p>վթարային շենքերի նորոգման աշխատանքների համար, այլ Երևան քաղաքի քանդման ենթակա 4-րդ աստիճանի վթարային շենքերի բնակիչների բնակարանային ապահովման նպատակով նոր բնակելի շենքերի կառուցման համար:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>գոտու վթարային շենքերը, որտեղի բնակիչները գիշերը քնելիս վստահ չեն, որ առավոտյան ողջ ու առողջ կարթնանան, ու շենքը նրանց վրա փլուզված չի լինի:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով միջոցներ հատկացնել Վանաձորի Աղայան 65 շենքի ամրացման աշխատանքների համար:</p> <p>Կից ներկայացնում եմ «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲ ընկերության կողմից 2013 թվականի հուլիսի 29-ին տրված եզրակացության պատճենը:</p>	
164.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյան	<p>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հիմնական կենսաթոշակը 14.000 դրամ է: Սկսած 2014 թվականի հունվարի 1-ից հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին տրվում է հավելում, որն 1-ին խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 40 տոկոս է կազմում, այսինքն՝ ընդամենը 19.600 դրամ: Մինչդեռ, համաձայն Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հայտնած տվյալների՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2014 թվականի 3-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ ըստ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի, կազմել է ամսական 56.600,3 դրամ: Ընդ որում, այստեղից դուրս են մնում դեղորայքային և այլ անհրաժեշտ ծախսերը:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Աշխատանքային կենսաթոշակների հաշվարկման կարգը սահմանված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով, համաձայն որի՝ մասնավորապես, աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի և կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է: Օրենքի 55-րդ հոդվածով սահմանված են հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին տրվող հավելումների չափերը՝ հիմնական կենսաթոշակի 40% և 20% չափով համապատասխանաբար 1-ին և 2-րդ խմբերի համար:</p> <p>Այսպիսով, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրով նախատեսված գումարը հաշվարկվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Գաղտնիք չէ, որ 1-ին խմբի հաշմանդամները սոցիալապես ամենախոցելի խումբն են և հիմնականում 100% անաշխատունակ: Հայաստանի Հանրապետությունը, համաձայն Սահմանադրության 1-ին հոդվածի, սոցիալական պետություն է, ինչը սակայն, բացարձակապես հակադարձվում է հաշմանդամներին տրվող սոցիալական օգնության ոլորտում, քանի որ այն գումարը, որը նախատեսվում է վճարել 1-ին խմբի հաշմանդամներին ուղղակի սիմվոլիկ բնույթ է կրում և անգամ նրանց գոյության ապահովման համար բավարար չէ:</p> <p>Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը խմբագրել այնպես, որ 1-ին խմբի հաշմանդամներն ամսական ստանան առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքին համարժեք (56.600 դրամից ոչ պակաս) կենսաթոշակ:</p>	<p>դրույթներին համապատասխան:</p> <p>Ներկայացված առաջարկությունը ենթադրում է հիմնական կենսաթոշակի չափի ավելացում նաև մնացած բոլոր աշխատանքային կենսաթոշակների տեսակների համար, ինչն իր հերթին նշանակում է «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրով նախատեսված գումարի շեշտակի ավելացում: Ներկայումս միայն աշխատանքային կենսաթոշակ ստացող առաջին խմբի հաշմանդամության կենսաթոշակ ստացողների թիվը կազմում է 6170 մարդ, իսկ առաջարկության ընդունման դեպքում լրացուցիչ ծախսը 2014 թվականին տարեկան կտրվածքով կկազմի շուրջ 1.5 մլրդ դրամ (ներառյալ վճարման ծառայության գումարը), իսկ 2015 թ. մեր մոտավոր գնահատմամբ՝ 1,1 մլրդ դրամ, որը նախատեսել հնարավոր չէ:</p> <p>Միաժամանակ հարկ է նշել, որ կենսաթոշակների չափերի ավելացումը ՀՀ կառավարության ծրագրային առաջնահերթություններից մեկն է, ինչն արտացոլված է նաև ՀՀ 2015-2017թթ ՄԺԾԾ-ում, որով առկա ֆինանսական ռեսուրսների շրջանակում նշված տարիների համար ծրագրվել է թե հիմնական կենսաթոշակի, թե աշխատանքային ստաժի 1 տարվա արժեքի ավելացում:</p>
165.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության	«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում մյուս պետական կրթական հաստատությունների հետ միասին նշվում են նաև միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող	Միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունները սոցիալական փաթեթով ապահովման ծրագրում ընդգրկելու հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ուսումնական հաստատությունները: Սակայն միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների (օրինակ՝ քոլեջների) աշխատակիցները սոցիալական փաթեթից չեն օգտվում, ինչը նշանակում է, որ կառավարության կողմից ցուցաբերվում է խտրական մոտեցում՝ առանց օբյեկտիվ հիմքի: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում են «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատակիցների սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի շահառուների ցանկում ընդգրկել նաև միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատակիցներին:</p>	2016-2018 թվականների ՄԺԾ շրջանակներում:
166	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>Առաջարկություններ 2015թ. բյուջետային ուղերձով նախատեսված մակրոտնտեսական քաղաքականության մասով</p> <p>1. Տրամաբանական չէ կառավարության բյուջետային ուղերձի մեջ նշել, որ 2014թ. տնտեսական 3.3% աճը պայմանավորված է ներքին տնտեսական զարգացման միտումներով և համաշխարհային տնտեսությունում աճի տեմպերի դանդաղեցմամբ: Համաշխարհային տնտեսության մեջ նման բան չկա: 2014թ. սպասվող աճը (2.5-3%) վերջին 10 տարում բարձրերից է. 2013թ.՝</p>	<p>Բյուջեի ուղերձի հաշվարկների հիմքում համաշխարհային պահանջարկի մասով ընկած են համաշխարհային տնտեսական աճի 2014թ. հուլիսի կանխատեսումները, (http://www.imf.org/external/pubs/ft/weo/2014/update/O2/), որտեղ նշված է, որ համաշխարհային տնտեսական աճը 2014 թ.կանխատեսվում է 3,4 տոկոս, որը 2013թ. հուլիսի կանխատեսման (http://www.imf.org/external/pubs/ft/weo/2013/update/O2/) նկատմամբ ցածր է 0,4 տոկոսային կետով, իսկ ԱՊՀ երկրների կանխատեսումը ցածր է 2,7 տոկոսային կե-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
		2.17%, 2012թ.՝ 2.38%, 2011թ.՝ 2.83%, 2010թ.՝ 4.07%, 2009թ.՝ -2.09%, 2008թ.՝ 1.46%, 2007թ.՝ 3.98%, 2006թ.՝ 4.1% և 2005թ.՝ 3.63%:	տով:
167.	«Կ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2. Անհասկանալի է, այնուամենայնիվ, թե 2015-ին տնտեսությունը ի՞նչու պետք է աճի 4.1%: Ի՞նչու, ասենք 14.1% չէ, կամ նույնիսկ 1.4%: Զուտ մասնագիտորեն, պետք էր բացատրել աճի բնույթը (աճի սպառում-առաջարկ համակցության մեջ) և ապա նկարագրել համապատասխան կոմպոնենտները: Մասնավորապես, կուզենայինք հասկանալ ներդրումների գնահատականը 2015-ին՝ 2014թ համեմատությամբ: Սա պետք է լիներ բյուջետային ուղերձի առանցքը: Բացի այդ, կարևոր է 2015-ին բյուջեի մեջ վերջապես առանձին աղյուսակ մտցնել և ցույց տալ, թե 2015-ին բյուջեի հաշվին «Կ տնտեսության մեջ ներդրումներն ի՞նչքան են: Ներդրումներ ասելով նկատի ունենք հիմնական կապիտալի տարրերի վրա կատարվող ծախսերը բյուջեից:	Ուղերձի «Կ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումներ» մասում մակրոտնտեսական կանխատեսումներն իրականացվել են համախառն առաջարկ-համախառն պահանջարկ համակցության մեջ, ըստ համապատասխան կոմպոնենտների, այդ թվում՝ ըստ կապիտալ ներդրումների: Տնտեսական աճը հաշվարկվել է ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի տեսանկյունից, ինչը գնահատվել է 2015 թ. համար 4.1 տոկոս: Հավելված. «Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ» աղյուսակում ներկայացված են, թե պետական ներդրումների, թե պետական սպառման իրական աճերը:
168.	«Կ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	3. 2015թ. Բյուջետային ուղերձի սկզբնամասում, գործարար և ներդրումային միջավայր, արտահանման զարգացում (էջ1-3) լուրջ ոչինչ չկա կամ էլ կոնկրետ ոչինչ չկա: Այսպես, եթե մի կոնկրետ բան էլ կա (օրինակ թույլտվությունների և լիցենզիաների ցանկի կրճատում), ապա հասցեական չէ կամ էլ սխալ է (օրինակ, այս փոքրիկ երկրում ազատ տնտեսական գոտիների ստեղծումը): Նույն տեղում (էջ 4) ՓՄՁ ոլորտի	2015թ. պետական բյուջեի ուղերձի մասը կազմող 2015թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների համատեքստում ՓՄՁ զարգացման մասով ներկայացվել է համապարփակ տեղեկատվություն 2015թ. կտրվածքով ՓՄՁ-ի սուբյեկտների պետական աջակցության և զարգացման հիմնական ուղենիշների ու նպատակադրում-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		զարգացում բաժնում ոչինչ չկա: Նախորդ կառավարության լոգունգային խոստումների ոճը պահպանված է: Նույնն է նաև «Տեխնոլոգիական զարգացում» բաժինը:	ների վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկատվություն ներառելու անհրաժեշտություն չկա: Բաժինը սերտորեն առնչվում և փոխկապակցված է ՏՏ ոլորտին, որի ներքո ներկայացված ծրագրերը հիմնականում վերաբերվում են նաև տեխնոլոգիական զարգացմանը:
169	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	4. Աղքատիկ են տեղեկատվական տեխնոլոգիաներ և զբոսաշրջություն բաժինները:	<p>Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ</p> <p>ՀՀ կառավարությունը մասնավոր հատվածի հետ համատեղ հետևողականորեն շարունակելու է Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանն ուղղված նախաձեռնությունները, որոնք նպատակ ունեն Հայաստանը արտապատվիրման ուղղված-ծություն ունեցող երկրից դարձնելու ՏՏ ոլորտում մեծ հավելյալ արժեք ստեղծող, տեղական ու միջազգային շուկաներում բարդ տեխնոլոգիական լուծումներ առաջադրող երկիր: Մասնավորապես, շարունակական ծրագրեր են իրականացվելու ոլորտում նոր վերազգային կազմակերպությունների ներգրավման և վերջիններիս հետ համատեղ տարածաշրջանային նշանակության նախագծերի իրականացման, ժամանակակից տեխնոլոգիական ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացման, նորարար գաղափարների գեներացումը և սկանակ ընկերությունների հիմնումը խթանող բարենպաստ բիզնես միջավայրի ձևավորման և ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման, ոլորտում բարձրորակ մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումն ապահովող ծրագրերի</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>շարունակական իրակա-նացման ուղղությամբ: Նշված նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվությունը սպառիչ կերպով ներկայացված է 2015թ. Բյուջետային ուղերձի «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» և «Տեխնոլոգիական զարգացում» բաժիններում:</p> <p>Զբոսաշրջության ոլորտ</p> <p>Բյուջետային ուղերձի նախագծում զբոսաշրջության ոլորտի մասը ներկայացված է հնարավորինս սեղմ և համապարփակ՝ ընդունված ձևաչափին համապատասխան:</p> <p>Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ 2015թ. պետական ծրագրի շրջանակներում իրականաց-վող միջոցառումների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ապահովելու նպատակով լրացուցիչ ներկայացվում է սույն տեղեկանքը:</p> <p><u>Մարքեթինգ և խթանում</u></p> <p>Ազգային բրենդի ռազմավարությանը համապատասխան՝ համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի առավել ակտիվ մարքեթինգ և խթանում, դրանց ուղղվող միջոցների ավելացում:</p> <p>Այդ թվում.</p> <p>- միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցություն: Կապահովվի Հայաստանի մասնակցությունը 8 հեղինակավոր</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>զբոսաշրջային ցուցահանդեսների: Ցուցահանդեսների ընտրությունը կատարվելու է մասնավոր հատվածի հետ: Քննարկվում են հետևյալ տարբերակները. Պեկինում «WTF` 2015», Բեռլինում «ITB` 2015», Լոնդոնում «WTM` 2015», Մադրիդում «FITUR` 2015», Փարիզում «TopResa` 2015», Մոսկվայում «MMIT` 2015», Ռիմինիում «TTG` 2015», Տոկիոյում «JATA` 2015»: Երևանում նախատեսվում է կազմակերպել «CTS` 2015» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը:</p> <ul style="list-style-type: none"> - նպատակային շուկաներից օտարերկրյա փորձագետների և լրագրողների, ինչպես նաև պոտենցիալ ներդրողների Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպում, - գովազդատեղեկատվական նյութերի թարմացում, պատրաստում և տարածում առնվազն վեց լեզուներով մշակված և տպագրված նյութերի տարածում նպատակային շուկաներում, - էլեկտրոնային մարքեթինգի իրականացում նոր հագեցված բովանդակությամբ նոր կայքի գործողություն, - զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների համակարգի ձևավորում և զարգացում, - «Բացահայտիր Հայաստանը» և «Երեվանը» հեռուստածրագրի հեռարձակում, - Ջբոսաշրջության ոլորտի մասնագիտացված թեմատիկ հեռուստահաղորդման հեռարձակում: <p><u>Համայնքներում զբոսաշրջության զարգացում</u></p> <ul style="list-style-type: none"> • Համաչափ տարածքային տնտեսական զարգաց-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>մանն ուղղված, տեղական ավանդույթների վերականգնման, զբոսաշրջային ներուժի բացահայտման, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորման նպատակով՝ ավանդական տոնակատարությունների, փառատոների կազմակերպում:</p> <p>Միջոցառումները նախատեսվում են իրականացնել պետական աջակցությամբ, մասնավոր հատվածի ու միջազգային գործընկեր կազմակերպությունների, ինչպես նաև ԼՂՀ գործընկերների հետ համագործակցությամբ: Այդ թվում.</p> <ul style="list-style-type: none"> - Գինու փառատոն ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի գյուղում շրջակա համայնքների մասնակցությամբ, - Ավանդական տոնաձիսական ուտեստների մրցույթ-փառատոն (Խորովածի փառատոն) ՀՀ Լոռու մարզի Ախ-թալա համայնքում շրջակա համայնքների մասնակցությամբ, - Արհեստների և արվեստների փառատոն ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում շրջակա համայնքների մասնակցությամբ, - Մշակութային վերածնունդ փառատոն (Գորգագործություն և կիրառական արվեստներ) ՀՀ Տավուշի մարզի Դիլի-ջան քաղաքում շրջակա համայնքների մասնակցությամբ, - «Սյունյաց ավանդույթներ» փառատոն Գորիս քաղաքում շրջակա համայնքների մասնակցությամբ, - «Օձունի գանձերը» փառատոն ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքում շրջակա համայնքների մասնակցությամբ,

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>- «Ձևեմարդուկ» ձևեմային փառաստոն ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում շրջակա համայնքների մասնակցությամբ:</p> <ul style="list-style-type: none"> • Համայնքներում զբոսաշրջության զարգացմանն ուղղված, այդ թվում՝ զբոսաշրջային տների ցանցի ընդլայնմանը համայնքներում (հատկապես՝ գյուղական)՝ տեղի բնակչության հետ սեմինար քննարկումների և ուսուցման կազմակերպում, զբոսաշրջության նշանակության մասին վերջիններիս իրազեկվածության բարձրացում, վերապատրաստման դասընթացների կազմակերպում: <p><u>Մարդկային ռեսուրսների զարգացում</u></p> <p>Զբոսավարների Ասոցիացիաների Համաշխարհային Ֆեդերացիայի (WFTGA) հետ համագործակցությամբ նախատեսվում է պետական աջակցություն զբոսավարների միջազգային կրթական կենտրոնի գործունեության ապահովմանը:</p> <p><u>Ենթակառուցվածքների զարգացում</u></p> <ul style="list-style-type: none"> • Ենթակառուցվածքների զարգացմանը և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանն ուղղված շարունակվելու է հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթացը՝ ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 4-ի N 946-Ն որոշմանը համապատասխան: • Ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված պետական աջակցության շրջանակներում կիրականացվի պիլո-տային ծրագիր ուղղված պատմամշակութային հուշարձանները, բնության հատուկ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>պահպանվող տարածքները և զբոսաշրջության գրավչության այլ վայրերը անհրաժեշտ զբոսաշրջային ենթակառուցվածքներով ապահովմանը:</p> <p><u>Միջազգային համագործակցություն</u></p> <p>Միջազգային համագործակցության զարգացման ենթատեքստում նախատեսվում է համագործակցության առավել ակտիվացում ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության, ԱՊՀ զբոսաշրջության խորհրդի, ոլորտի այլ միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև դրանց անդամ պետությունների հետ երկկողմ ու բազմակողմ ձևաչափով:</p>
170.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>5. Անհասկանալի է «Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում» բաժինը: Ծավալուն շարադրանքում մի կոնկրետ խոսք անգամ չկա համայնքների բյուջետային ինքնաբավության աստիճանի բարձրացման մասին: Միայն մի աղոտ պարբերություն «համայնքների ֆինանսական հնարավորությունների բարձրացման» մասին, ակնարկ տուրքերի մասով: ՀՀ-ն միակ մեզ հայտնի տեսադաշտում գտնվող երկիրն է, որտեղ տեղական ինքնակառավարման մարմիններին ամրակցված եկամուտները կազմում են նրանց պետքերի 29%-ը:</p>	<p>Գոյություն ունի տեղական բյուջեների եկամտային մասի ավելացման երկու եղանակ՝ առկա հարկատեսակների ավելացում կամ հարկատեսակների դրույքաչափերի ավելացում:</p> <p>1. ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, փորձելով գնալ առաջին ճանապարհով՝ 2009 թվականին մշակել էր «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում էր զգալիորեն ընդլայնել եղած հարկատեսակների քանակը, մասնավորապես՝ հյուրանոցային հարկ, վաճառքի հարկ, անավարտ շինարարության (կամ ոչ պատշաճ պահպանված անշարժ գույքի) հարկ, գյուղատնտեսական նշանակության անմշակ հողերի հարկ, կառուցապատման նշանակության հողատարածքների ոչ նպատակային</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>օգտագործման հարկ, համայնքի սեփականություն համարվող օբյեկտների վրա գովազդ տեղադրելու հարկ, տրանսպորտային միջոցների կայանատեղի հարկ (հետագայում այն ձևափոխվեց որպես տեղական տուրք), հանրային տարածքների զբաղեցման հարկ: Սակայն ՀՀ Ազգային ժողովը նպատակահարմար չգտավ վերոնշյալ հարկատեսակների ներդրումը:</p> <p>2. Ինչ վերաբերվում է երկրորդ եղանակին (հարկատեսակների դրույքաչափերի ավելացում), կարծում ենք բնակչության ներկայիս սոցիալական կացության պայմաններում, այն կհանգեցնի հարկային բեռի ավելացմանը: Տարիներ շարունակ տեղական հարկերի դրույքաչափերը, ելնելով վերոնշյալ հանգամանքից, չեն ենթարկվել փոփոխության:</p> <p>Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ կառավարության կողմից մշակվել են «Անշարժ գույքի հարկի մասին» և «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնց ընդունմամբ զգալիորեն կպարզեցվի համակարգի վարչարարությունը:</p>
171.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	6. Այս նույն տեղում կարդում ենք համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման մասին: Կարծում ենք պատերազմի նախաշեմին համայնքների խոշորացման մասին խոսելն անգամ ավելորդ է:	Համայնքների խոշորացումն և միջհամայնքային միավորումների ձևավորումը նպատակաուղղված է կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ռեսուրսների (բնական, ֆինանսական, մարդկային) առավել օպտիմալ և նպատակային օգտագործմանը, ինչը, մեր կարծիքով, կազմակերպչական առումով ավելի նպաստավոր պայմաններ կստեղծի խոշորացվող համայնքներում: Բացի այդ, սահմանամերձ համայնքների նկատմամբ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>դրսևորվելու է տարբերակված մոտեցում, և ներկա ժամանակահատվածում ընդհանրեպես չի քննարկվում հակամարտության շփման գոտում գտնվող համայնքների խոշորացման հարցը:</p>
172.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>7. Գյուղատնտեսության բաժինն այս տարի ավելի լավ է քան նախկինում: Բայց, նորից, պետք է մի քանի կոնկրետ քայլ խոստանալ կոոպերացիայի ուղղությամբ: Պետք է նաև կիրառել գյուղմթերքների սուբսիդավորման գոնե պիլոտային ծրագիր:</p>	<p>ՀՀ պետական բյուջեի նախագծում գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության կոնկրետ առանձին ծրագիր նախատեսված չէ, սակայն այլ ծրագրերով նախատեսված են քայլեր գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման, դրանց կարողությունների ուժեղացման ուղղությամբ: Մասնավորապես, «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի առանցքային դրույթներից է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման և դրանց գործունեությանը նպաստելու միջոցով մրցունակ անասնապահության զարգացումը: Ծրագրի շրջանակներում նախատեսված 55-ի փոխարեն, տնտեսված միջոցների ներգրավմամբ, ընդհանուր առմամբ հանրապետության 90 համայնքներում ձևավորվել են «Համայնքի արտոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ: Աշխատանքները շարունակվելու են նաև 2015թ. ընթացքում: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» նոր ծրագրով, որը մեկնարկվելու է 2015 թվականին նույնպես նախատեսված է բազմաթիվ (ավելի քան 100) գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորում և դրանց գործունեության աջակցություն:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Բացի այդ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել է նաև «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծը, որը ենթարկվել է միջազգային փորձաքննության: Ներկայումս ստեղծվել է աշխատանքային խումբ՝ կազմված ՀՀ հանրային խորհրդի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներից՝ նախագծի վերջնական լրամշակման և հետագա ընթացք տալու համար:</p> <p>Հարկ է նաև նշել, որ կոոպերացիայի զարգացումը կամավորության սկզբունքի վրա հիմնված երկարատև գործընթաց է և այն պահանջում է աստիճանական զարգացում, որին էլ ուղղված է ներկայումս կիրառվող պետական քաղաքականությունը:</p>
173.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>8. Էներգետիկայի ծրագիրը էականորեն փոխվել է դեպի լավը: Այնուամենայնիվ, պետք է ավելի կոնկրետ բաներ գրել նոր ատոմային էներգաբլոկի շինարարության ուղղությամբ կատարվող քայլերի մասին (անընդհատ, արդեն որերորդ տարին շարունակում ենք հետազոտությունները, կատարում նախապատրաստական աշխատանքներ), ինչպես նաև պլանավորել արևային հզորությունների (մեգավատով) գործարկում: Նպատակահարմար կլինի նոր, վերականգնվող էներգետիկայի խրախուսման կապակցությամբ նախատեսել օրենքի ընդունում, այս փուլում երաշխավորել նման ձևով արտադրված էլեկտրաէներգիայի սպառումը, խրախուսողական</p>	<p>2010թ. օգոստոսին ՀՀ և ՌԴ-ի միջև «ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համագործակցության մասին» միջկառավարական Համաձայնագրի համաձայն, ռուսական կողմը հանդիսանում է ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման Ծրագրի ներդրող և ներդրման մասը հավասար է ռեակտորային կղզյակի սարքավորումների արժեքին: Մինչ օրս ՀՀ կառավարությանը ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրում այլ ներդրողներ ներգրավել չհաջողվեց: Վարկային միջոցների ներգրավումը սահմանափակվեց պետական երաշխիքի տրամադրման անհնարինության պատճառով: Արդյունքում նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը դուրս մնաց ՀՀ կառավարության ծրագրից: 2014 թվա-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		տարիֆների կիրառումը:	<p>կանի մայիսի 19-ի N511-ն որոշմամբ նախագիծը նորից ներառվեց ՀՀ կառավարության ծրագրում, որտեղ նախատեսվում է շինարարությունը սկսել 2018 թվականին, որպեսզի 2026 թ-ին այն հանձնվի շահագործման:</p> <p>Ներկայումս բանակցային փուլում է ՌԴ-ի «Ռոսատոմ» ՊԿ-ի հետ ՀՀ-ում ՋԶԷՌ- 1000 նախագծի կամ ՋԶԷՌ-600 նախագծի իրականացման հնարավորությունը, հիմք ընդունելով միջպետական Համաձայնագրում ամրագրված սկզբունքները:</p> <p>2015թ. նոյեմբերին ՀՀ կառավարություն կներկայացվի «ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման Ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որում կամփոփվեն մինչ այժմ կատարված աշխատանքները, կնախանշվեն հետագա գործառույթները համաձայն մշակված ժամանակացույցի:</p> <p>«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված է թե խրախուսողական տարիֆների կիրառումը և թե այդ կայաններում արտադրված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքները: Ընդ որում այսօր գործում են խրախուսողական տարիֆներ ջրի, հողմի, քամու և կենսազանգվածի հաշվին էլեկտրաէներգիայի գնման համար: Նախատեսում ենք 2016 թվականին խրախուսողական տարիֆ սահմանել նաև արևային էներգետիկայի համար: Այդ տարիֆը սահմանել մրցութային կարգով ցածր եկամուտներով երկրներին աջակցության (SREP) ծրագրի շրջանակներում: Այդ նույն</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել 30-50 ՄՎտ հզորությամբ արևային կայաններ՝ կախված ֆինանսավորման չափից և ձևավորված տարիֆից:
174.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	9. Անհաջող է ստացվել ջրային տնտեսություն բաժինը: Տեքստը նույնն է, ինչ նախորդ տարիներին: Համոզված ենք, այստեղ լուրջ բարեփոխումներ են անհրաժեշտ՝ հատկապես ոռոգման համակարգերը (ներտնտեսային) գյուղատնտեսական կոոպերատիվներին հանձնելու ուղղությամբ:	Ուղերձում հիմնականում նշված են ոլորտի հիմնախնդիրները, նախատեսվող աշխատանքները և ոլորտի հետագա քաղաքականությունը, որոնք որոշ դեպքերում ընդհանուր քաղաքականության շարունակությունն են և պարտադիր չէ, որ փոփոխվեն յուրաքանչյուր տարի: Բացի այդ՝ ուղերձի հետագա քաղաքականության մասը լրամշակվել է՝ համաձայն համակարգում տարվող քաղաքականության: Ինչ վերաբերում է ոռոգման համակարգերը (ներտնտեսային) գյուղատնտեսական կոոպերատիվներին հանձնելու առաջարկությանը, ապա հայտնում ենք, որ ներկայումս այդ համակարգերը հանձնված են ստեղծված 42 ջրօգտագործողների ընկերություններին (ԶՕԸ) և ներկայիս քաղաքականությունը ուղղված է ԶՕԸ-ների կայացմանը:
175.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	10. Տրանսպորտի և ավիացիայի բաժինները պարզապես չեն ստացվել: Անհասկանալի է ճանապարհաշինարարության կոնսեպտը: Մասնավորապես, ո՞րն է չափանիշը: ՀՀ անվտանգությունը: Ի՞նչու է կառուցվում Հս-Հարավը այս տարբերակով: Ի՞նչու չի ապահովվում Իջևանով - Բերդ, Կիրանց-Ջուջևան, դեպի Մեղրի թունելների և անխափան ճանապարհների շինարարությունը: Երկաթուղիների մասով տեքստն այս էլ որերորդ:	Տրանսպորտի բաժնի ճանապարհաշինության կոնցեպտը ՀՀ անվտանգությունն ամրապնդելուն զուգահեռ՝ հանրապետության տարածաշրջանների, բնակավայրերի և հարևան երկրների միջև առկա և ստեղծվող ճանապարհային ցանցի տրանսպորտաշահագործման վիճակի բարելավումն է, որն էապես նպաստում է կայուն տնտեսական աճին, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և միջազգային տրանսպորտային համակարգին ճանապարհային

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		տարին կրկնվում է:	<p>ցանցի ինտեգրմանը:</p> <p>Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի կառուցման ծրագիրը ՀՀ-ի համար ռազմավարական նշանակություն ունենալուց բացի ունի նաև տարածաշրջանային կարևոր նշանակություն, որի կառուցմամբ հետագա տրանշերի ընթացքում կլուծվի նաև դեպի Մեդրի անխափան ճանապարհների, անհրաժեշտության դեպքում նաև թունելների կառուցման հարցը: 2014թ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին բարելավվել են Տաուշի մարզի ճանապարհները՝ մասնավորապես Մ-16, Մ-4 Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6, Հ-36 Մ-4 Իջևան-Նավուր-Բերդ-Այգեձոր ճանապարհները, կառուցվել է նաև Վազաշեն-Պատվաքար նոր շրջանցիկ ճանապարհահատվածը:</p> <p>Ինչ վերաբերվում է երկաթուղիների մասով տեքստի կրկնվելուն ապա անհրաժեշտ է նկատի ունենալ, որ երկաթուղային և ավտոբուսային փոխադրումների սկզբնակետի և վերջնակետերի համատեղման և ուղևորափոխադրումներից առաջացած վնասի սուբսիդավորման աշխատանքները շարունակական բնույթ են կրում, ուստի բովանդակային առումով դրանց տեքստային ձևակերպումները չեն փոփոխվում:</p>
176.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	11. Քաղավիհցիայի մասով ոչինչ չկա: Արդեն որերորդ տարին է հայտարարվում է բաց երկնքի քաղաքականություն: Դա ո՞րն է: Ավիացիան ընդհանրապես հետադիմում է: Մարդիկ կանոնավոր կերպով Թբիլիսիից են թռիչքներ վերցնում: Դեպի Երևան չվերթներն իրար	Բաց երկնքի քաղաքականությունը ենթադրում է ավիաընկերությունների առևտրային հարաբերություններին պետության միջամտության նվազեցում, այսինքն, ավիաընկերություններն իրենք են

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
		<p>Ետևից փակվում են: Ինչպես պետք է լուծվի մրցակցային հիմունքներով ավիաընկերություններին նավթով ապահովելու հարցը:</p>	<p>որոշում իրենց կողմից մատուցված ծառայությունների գները, թռիչքների հաճախականությունը և այլն: Պետությունը չի սահմանափակում նրանց հնարավորությունները՝ ապահովելով հավասար մրցակցային պայմաններ բոլոր ավիաընկերությունների համար:</p> <p>2014թ. հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ուղևորահոսքը աճել է 22,3%-ով՝ կազմելով 1,781.7 հազար ուղևոր, իսկ չվերթերի թիվն այդ նույն ժամանակահատվածում աճել է 23,8%՝ կազմելով 9018 չվերթ:</p> <p>Յուրաքանչյուր ամիս ցուցանիշները տարբեր են (կախված սեզոնայնությունից), սակայն նախորդ տարվա հոկտեմբերից («Բաց երկնքի» քաղաքականության ընդունում) նկատվում է և ուղևորահոսքի, և թռիչքների հաճախականության միայն աճ:</p> <p>Հայկական շուկան համալրվել է նոր ավիաընկերություններով, այդ թվում՝ Etihad, Air Arabia, LOT, Mahan Air և այլ ավիաընկերություններ:</p> <p>Ինչ վերաբերում է մրցակցային հիմունքներով ավիավառելիքի ներկրման և մատակարարման հարցին, ապա «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի Կոնցեսիոներին է տրված օդանավակայանին առնչվող</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			վառելիքի և հեղուկների մատակարարման բացառիկ իրավունքը:
177.	«Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>12. Կրթություն: Ի՞նչու պետք է նախադպրոցական ծրագրերի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից միջոցներ տրվեն տեղական ինքնակառավարման մարմիններին: Ի՞նչու տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության մակարդակը չի բարձրացվում: Ի՞նչու են շախմատը և հայ եկեղեցու պատմությունը դասավանդվում դպրոցում: Առաջին դեպքում խոսքն իրեն սպառած խաղի մասին է: Ներկայումս համակարգիչներն գրեթե անխափան հաղթում են պրոֆեսիոնալ շախմատիստներին: Խաղի ստեղծագործական հորիզոնները սպառված են: Այսօր մի բան էլ տարիներ առաջ պատահեց շաշկի խաղին: Ի՞նչ կարող է տալ նման խաղը հասարակությանը՝ հայտնի չէ: Եկեղեցու պարագայում կա հայ ժողովրդի պատմություն առարկան, որտեղ առանձին գլուխներ և պարագրաֆներ կարող են լինել եկեղեցու մասով: Առանձին առարկա դասավանդելով մենք, նախ, խախտում ենք Սահմանադրությունը և, երկրորդ, արհեստականորեն պետությունից վեր ենք դնում եկեղեցուն: Այս պարագայում վերջինս դառնում է վտանգավոր և հակապետական: Այս ամենը միջոցների վատնում է հակապետական կամ անպտուղ միջոցառումների վրա: Այդ գումարները կարելի էր ծախսել հանրակրթության ոլորտում SS զարգացնելու վրա: Նույն երեխաները</p>	<p>«Կ և Միջազգային զարգացման ընկերակցության միջև Ջարգացման քաղաքականության վարկային 2-րդ ծրագրի կրթության ոլորտի 2010 թվականի ելակետային միջոցառումները՝ նախադպրոցական կրթության մասով, և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման հետագա ընթացքի մասին» N 29 արձանագրային որոշման 15-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարությունն 2010 թվականի նոյեմբերի 4-ին ընդունել է N 1427-Ն որոշումը, ըստ որի պետական բյուջեում նախատեսվել են միջոցներ՝ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման ընթացիկ ծախսերի մասով, ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: Այդ միջոցները տրվում են այն ուսումնական հաստատությանը, որը կազմակերպում է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա նախադպրոցական ծառայություն: Ինչ վերաբերում է «Շախմատ» և «Հայոց եկեղեցու պատմություն» առարկաների դասավանդմանը, ապա.</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
		<p>դպրոցում շախմատ խաղալու փոխարեն կարող էին շախմատային ծրագրեր գրել:</p>	<p>«Շախմատ» առարկայի ուսուցումը տարրական դպրոցում ունի կրթական մեծ ներուժ, որը պայմանավորված է հետևյալ առանձնահատկություններով.</p> <ul style="list-style-type: none"> • Շախմատը նպաստում է սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը: • Շախմատում զարգանում և կատարելագործվում է սովորողի երևակայությունը, վերլուծական կարողությունները՝ դրանով իսկ նպաստելով ուսումնական մյուս առարկաների ուսումնասիրմանը: • Շախմատում դրսևորվում է նպատակին հասնելու համար հետևողական և քրտնաջան աշխատանքի անհրաժեշտությունը, որը նպաստում է աշակերտի հոգևոր աշխարհի ձևավորմանը: • Շախմատը, պարունակելով գիտության, արվեստի և սպորտի տարրեր, աշակերտի մեջ զարգացնում է ինքնուրույն աշխատանքի միջոցով հաջողությունների հասնելու կարողություններ: Արվեստի առումով այն զարգացնում է աշակերտի ճաշակը, գեղեցիկը ընկալելու և գնահատելու կարողություններ: Սպորտի տեսանկյունից շախմատը զարգացնում է աշակերտի կամային որակները, մինչև վերջ պայքարելու, օբյեկտիվ լինելու, ճիշտ գնահատելու, ինչպես նաև արժանապատիվ պարտվելու կարողություններ: <p>Շախմատը նպաստում է նաև աշակերտի ինքնադրսևորմանը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորմանը:</p> <p>«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>ուսումնական ծրագիրը ներառում է ավանդական դասական կրոնների, ինչպես նաև քրիստոնեության պատմությունը՝ ներառելով Աստվածաշնչյան տարածված և հիմնական պատմությունները, որոնք բացառապես ներկայացված են որպես պատմական դեպքեր և ոչ դավանաբանական կամ հավատքի թելադրանք:</p> <p>«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի նպատակն է՝ ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելու ու հաղորդակից դարձնելու միջոցով նպաստել աճող սերնդի ազգային-հոգևոր նկարագրի ամբողջացմանը:</p> <p>Այս խնդիրն առանձնակի կարևորություն ունի նաև նոր սերնդին ընդհանուր բարոյական արժեքները և հասկացությունները փոխանցելու առումով, քանի որ ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում եկեղեցին համամարդկային արժեքներ կրող կարևորագույն ինստիտուտ է: Հետևաբար, դասընթացն իր կարևոր նպաստն է բերում սովորողների ընդհանուր աշխարհայացքի, հոգեբանության և բարոյական ըմբռնումների ներդաշնակ ձևավորմանը:</p> <p>Դասընթացի նպատակն է նաև՝ ամբողջացնել հայագիտական առարկանների՝ հայոց պատմության և մշակույթի հետ կապված հարցերի շրջանակը՝ ամրապնդելով այդ առարկաներից սովորողների գիտելիքները, լրացուցիչ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել, ինչպես նաև վեր հանել բազմաթիվ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>իրադարձությունների և երևույթների ընթացքը պայմանավորող հոգևոր-եկեղեցական գործոնները:</p> <p>Դասընթացն օգնում է նաև ստուգաբանել մեր կյանքի ու կենցաղի բազմաթիվ հարցեր, որոնց բացատրությունը կապված է ազգային-եկեղեցական ավանդույթների հետ:</p> <p>Հայաստանի Հանրապետությունն ընդգրկված է համաշխարհային քաղաքակրթական նշանակություն ունեցող այնպիսի խոշոր գործընթացների մեջ, որոնց ազդեցությունն ակնհայտ է մշակույթի և հոգևոր-բարոյական հարցերի բնագավառում:</p> <p>«Հայոց եկեղեցու պատմություն» առարկան օգնում է ընկալելու արևմտյան, մասնավորապես համաեվրոպական կյանքի շատ արժեքներ, որոնք նույնպես կապված են քրիստոնեության հետ:</p>
178.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	13. Այս ամենին զուգահեռ պետք է փոխվի կրթության ֆինանսավորման համակարգը: Պետք է ֆինանսավորել սովորողներին (աշակերտներ և ուսանողներ), այլ ոչ թե դպրոցներին ու կրթական հաստատություններին:	Հանրապետության բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է ըստ աշակերտների թվի՝ բանաձևով: Ինչ վերաբերում է մնացած կրթական ծրագրերով ըստ սովորողների թվի ֆինանսավորմանը, ապա ընդունելի է յուրաքանչյուր կառուցողական առաջարկություն, որը կբխի կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների իրականացումից:
179.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	14. Գիտության բաժինը շատ թույլ է շարադրված: Չկա հիմնականը՝ բարեփոխումների քաղաքականությունը: Գիտությանը հատկացվող միջոցներն ավելանում են,	Գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորման ծավալների փոփոխությունը կրում է պարբերական բնույթ՝ երկամյա

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>բայց թեմատիկ ֆինանսավորումը պակասում է: Գիտության ոլորտում գերակա արժեքները խորհրդային են, փոփոխություններ չկան: Ակադեմիկոսներ, թղթակից-անդամներ, դրանք մեծ մասամբ փողով, կլանային և համերկրացու (земляк) սկզբունքով «ընտրված» մարդիկ են: Չկա իրական գիտական պրոդուկտ: Պետք է վերջապես հրաժարվել գիտության վաստակավոր գործիչների, խորհրդային շրջանից եկող այլ տիտուլներից: Վերլուծությունը ցույց է տալիս, որ տիտուլավոր «գիտնականները», որպես կանոն, չունեն գիտական միտք, հայտնագործություններ, պատենտներ, չեն ցիտվում հեղինակավոր ամսագրերում և այլն: Միթե, օրինակ, ճիշտ է գիտության բաժնում գրել այսպիսի «ծրագրային» միտք. ապահովել գիտական և գիտամանկավարժական կադրերի արդյունավետ սերնդափոխություն: Այստեղ ի՞նչն է ծրագրայինը: Իսկ այն, որ «ՀՀ 2015թ. պետական բյուջեի նախագծի գիտության մասով ընդգրկված ծրագրերը միտված են գիտության ոլորտում բարեփոխումների իրականացմանը», պարզապես չի համապատասխանում իրականությանը: Ե՞րբ պետք է գիտությանը հատկացված միջոցները հասցեագրվեն կոնկրետ կատարող գիտնականներին: Պետք է ֆինանսավորվեն գիտնականներն, այլ ոչ թե գիտական հաստատությունները: Բացի այդ, հույժ կարևոր է գիտությանը հատկացվող գումարները սահմանել ՀՆԱ գոնե 1%-ի չափով:</p>	<p>պարբերականությամբ, ինչը թելադրված է ավարտվող մրցույթի թեմաների հաշվետվությունների գիտական փորձաքննության անցկացման ու միայն դրանից հետո նորերի ֆինանսավորման անհրաժեշտությամբ:</p> <p>Գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքը (պրոդուկտը) գիտական հոդվածները, մենագրությունները, գիտաժողովների զեկույցները, արտոնագրերը և ընդհանրապես «նոր գիտելիքներ կամ լուծումներ բովանդակող ու տեղեկատվության ցանկացած կրիչի վրա գրանցված գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության» արդյունքն է: Այդ իմաստով, գիտության ոլորտում առաջընթացի մասին կարելի է խոսել, մասնավորապես, գիտական ամսագրերում հրատարակված հոդվածների և դրանց վրա եղած հղումների քանակի դինամիկայով: Միջազգային ասպարեզում մրցունակ գիտական արդյունքի առկայության մասին էլ կարելի է դատողություններ անել՝ հիմք ընդունելով հեղինակավոր միջազգային ամսագրերի հրապարակումները: Ըստ այդ պարամետրերի առաջընթացն ակնհայտ է: Այսպես, միջազգային առաջատար SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների համաձայն, ՀՀ գիտական աշխատողների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ 2010-2013թթ. Հրապարակվել ու այդ շտեմարանում ընդգրկվել են համապատասխանաբար՝ 779, 971, 1114 և 980 փաստաթուղթ, իսկ հղումների քանակը 2014թ. նոյեմբերի 10-ի դրությամբ կազմել է համապատասխանաբար՝ 4861, 5265, 7421 և 994: Բեր-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ված թվերի համադրությունը ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում ընդգրկված աշխատողների թվաքանակին (շուրջ 6000 մարդ) ցույց է տալիս, որ գիտության ոլորտի առաջընթացն ակնհայտ է:</p> <p>Ինչ վերաբերում է գիտական և գիտամանկավարժական կադրերի արդյունավետ սերնդափոխությանը, ապա այն գիտության առջև ծառայած ամենակարևոր խնդիրներից մեկն է՝ 2014թ. նոյեմբերի դրությամբ պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտությունների դոկտորների միջին տարիքը կազմում է 66տ., իսկ թեկնածուներինը՝ 52:</p> <p>Գիտության ոլորտում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումների արդյունքները ներկայացված են վերոնշյալ թվային գնահատականների տեսքով:</p>
180	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>15. Առողջապահության ոլորտի քայլերը նույնպես լողունգային են: Չկա ամենակարևորը. ինչ մեխանիզմներ են կիրառվելու ոլորտում մրցակցությունը խրախուսելու, բուժման որակն ու պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ: Ինչպիսին է ոլորտի եկամուտներ գեներացնելու հնարավորությունը, հարկատվության մակարդակը: Ո՞վ կամ ինչն է լինելու ոլորտում ֆինանսավորման օբյեկտը: Խոսքը մասնավորապես պետական պատվերով նախատեսված միջոցները սերտիֆիկատների ձևով բնակչությանը տրամադրելու մասին է:</p>	<p>Հայաստանի Հանրապետությունում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեն ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման հավելված 1-ով սահմանված անվճար բժշկական օգնության իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով խմբերը, իսկ առանձին հիվանդությունների գծով բնակչության բոլոր խմբերը: Պետական պատվերի տեղադրման և դրանից օգտվելու ընթացակարգերը սահմանված են ՀՀ առողջապահության</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Նախարարության համապատասխան չափորոշիչներով: Պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ Ձեր կողմից բարձրացված հարցերը ինչ խոսք մտահոգիչ են: Պետական պատվերի շրջանակներում բուժօգնության կազմակերպման և ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման հարցերը մշտական քննարկման փուլում են, դրանց արդյունքների մասին կտեղեկացվի ՀՀ առողջապահության նախարարության կողմից:</p>
181.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>16. Անհասկանալի է սոցիալական ապահովության բաժնում խոսել այն մասին, թե իբր պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի արդյունքում կապահովվի համակարգի երկարաժամկետ կայունություն: 2015թ. տնտեսական աճը թույլ է, ներդրումային ռեսուրսներն անբավարար են: Դրա պատճառներից մեկն էլ այս կուտակային համակարգն է: Ընդհանրապես ինչպես այս բաժինը, այնպես էլ ֆիզկուլտուրա և սպորտ ու բնապահպանության բաժինները գրվել են իներտ, հերթական նախաձեռնությունների սկզբունքով: Նման բաներ գրելուց առաջ պետք է նկատի ունենալ. բյուջեում ճիշտ է արտացոլել տնտեսական կամ սոցիալական քաղաքականության այն միջոցառումները, որոնցից ուղղակի եկամուտներ են ստացվում կամ ուղղակի ծախսեր են կատարվում: Օրինակ, ինչ անմիջական կապ ունի բյուջեի հետ ահա այսպիսի միտքը (նման մտքերով Ուղերձը հեղեղված է). «մշտապես ուշադրության</p>	<p>Հայաստանում մինչ 2014թ. հունվարի 1-ը գործող կենսաթոշակային բաշխողական համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ կենսաթոշակների վճարմանն ուղղվող ծախսերը արդեն իսկ կազմում էին բյուջեի 25%-ը և ունեին աճի միտում, կատարած հաշվարկների համաձայն արդեն 20-25 տարուց բյուջեի ծախսերի առյուծի բաժինը կուղղվեր կենսաթոշակային ծախսերի ֆինանսավորմանը, որը մեր պետությանը կկանգնեցներ ֆինանսական կայունության խաթարման ռիսկի առաջ: Իսկ ներկա համակարգով, պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում կենսաթոշակների վճարմանն ուղղվող ծախսերը աստիճանաբար նվազելու են, որը երկարաժամկետ կտրվածքով (20-22 տարի) կնպաստի կայունության աճին:</p> <p>Ինչ վերաբերվում է ներդրումային ռեսուրսներին, ապա Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերը իրենցից ներ-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Կենտրոնում պահել բնական միջավայրի ռադիոակտիվ աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոններ կառավարումը, բնական ու մարդածին ազդեցությունների կանխատեսման համակարգի զարգացումը՝ ներառյալ գոյություն ունեցող մշտադիտարկումների ցանցի կատարելագործումն ու ընդլայնումը»: Որ չգրեինք չէինք անել՞ու:</p>	<p>կայացնում են ներդրումային բավականին լուրջ ռեսուրսներ, որոնց ներդրումների մեծ մասը իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում, որն էլ իր հերթին հետագայում կնպաստի տնտեսության և ֆինանսական համակարգի զարգացմանը:</p>
182.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>17. Նույնն է նաև հասարակական կարգի պահպանում ենթաբաժինը: Պարզապես թվարկված են ոստիկանության աշխատանքային պարտականությունները (չնչին բացառություններով): Այստեղ է, որ պետք խնդիր դրվեր հանցագործությունները կրճատելու, հասարակական կարգի խախտման թվային արձանագրման և այլն առումով: Օրինակ, մարդկանց գրպանին լրջորեն խփում է նկարահանող սարքերի միջոցով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման հետ կապված տուգանքները: Նվազագույն աշխատավարձի համեմատ սրանք մեծ թվեր են: Սակայն ոչ մի վերլուծություն չկա, թե այդ համակարգը ինչի է հանգեցրել, ի՞նչպիսին են խախտման թվերը, ի՞նչ եկամուտներ են ստացվել, ի՞նչպես են դրանք բաշխվել և այլն:</p>	<p>Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2012թ.-ից սկսվել է ներդրվել նաև ճանապարհային երթևեկության կանոնների վերահսկողության ավտոմատ համակարգը (ավտոճանապարհներին՝ արագաչափ սարքեր և խաչմերուկներում՝ դիտարկման տեսախցիկներ): Այդ համակարգի միջոցով արձանագրվող խախտումների գծով տուգանքները մուտքագրելու համար ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանում ճանապարհային ոստիկանության անվամբ բացվել է արտաբյուջետային միջոցների համապատասխան հաշիվ: Ճանապարհային ոստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման արտաբյուջետային ֆոնդի կազմավորման և ծախսման հարաբերությունները կարգավորվում են «Ճանապարհային երթևեկության անվտանգության</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ապահովման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև բյուջետային գործընթացը կանոնակարգող այլ օրենքներով և ենթօրենսդրական ակտերով: Ըստ այդմ, արտաբյուջետային ֆոնդի յուրաքանչյուր տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը հաստատվում է ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ իսկ ծախսման հաշվետվությունը ներառվում է պետական բյուջեի տարեկան հաշվետվության մեջ:</p> <p>«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման» մասին ՀՀ օրենքի Գլուխ 81- ի Հոդված 331-ի 3-րդ կետի համաձայն արտաբյուջետային ֆոնդը ծախսվում է ճանապարհային ոստիկանության համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, ճանապարհային ոստիկանության ծառայողների սոցիալական վիճակի բարելավման և նյութական խրախուսման, ճանապարհային ոստիկանության ծառայողների վերապատրաստման (որակավորման), ճանապարհային ոստիկանության շենքերի, շինությունների, ծառայության պայմանների բարելավման, ինչպես նաև նշված հոդվածով նախատեսված այլ, այդ թվում ՀՀ կառավարության սահմանած ուղղություններով:</p> <p>Ճանապարհային ոստիկանության 2012թ.-ի արտաբյուջետային ֆոնդի փաստացի մուտքերը կազմել են՝ 8,930.6 մլն դրամ դրամ, որից՝ 3.380,9 մլն. դրամը կամ 37.9%-ը ավտոմատ համակարգի միջոցով արձանագրված</p> <p>Խախտումների գծով: Տվյալ տարում շահագործվել է</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	« կառավարության դիրքորոշումը
			<p>միջին հաշվով 40 արագաչափ և 28 խաչմերուկներում տեղադրված դիտարկման տեսախցիկներ, որոնց միջոցով արձանագրվել է 415,927 վարչական իրավախախտում մեկ արագաչափի և խաչմերուկի հաշվարկով արձանագրված խախտումները կազմել են 6,116 հատ իսկ դրանցով նշանակված տուգանքի միջին չափը կազմել է 11,010 դրամ:</p> <p>Արտաբյուջետային ֆոնդի 2013թ.-ի փաստացի մուտքերը կազմել են 12,008.0 մլն դրամ, (2012 թ.-ից՝ 3,077.4 մլն. դրամով, 34.4 %-ով ավելի) որից՝ 6,180.7 մլն դրամը կամ 51.5%-ը բաժին է ընկնում ավտոմատ համակարգի միջոցով արձանագրված խախտումների գծով մուտքերին (2012 թ.-ից՝ 2,799.8 մլն դրամով, 82.8 %-ով ավելի): Նախորդ տարվա նկատմամբ աճը հիմնականում վերագրվում է ավտոմատ համակարգի միջոցով արձանագրված խախտումների գծով մուտքերին և պայմանավորված է նշված համակարգը 2012թ.-ի կեսերից շահագործվելու հանգամանքով:</p> <p>2013թ.-ին շահագործվել է տարեկան միջին հաշվով 80 արագաչափ և դիտարկման տեսախցիկներով կահավորված 64 խաչմերուկ, որոնց միջոցով արձանագրվել է 860,855 վարչական իրավախախտում, որը վերոգրյալ հանգամանքով պայմանավորված գերազանցում է 2012թ.-ի նույն ցուցանիշը շուրջ կրկնակի անգամ: Այդուհանդերձ, ավտոմատ համակարգի միավորի հաշվարկով արձանագրված խախտումների թիվը կազմել է 5,978 հատ կամ 2012թ.-ի նույն ցուցանիշից</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>138-ով, 2.25%-ով պակաս, իսկ նշանակված տուգանքի միջին չափը՝ 9,783 դրամ կամ 2012թ.-ից 1,227 դրամով, 11.1 %-ով պակաս:</p> <p>2014թ.-ի 10 ամսում ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային ֆոնդի փաստացի մուտքերը կազմել են 11,716.9 մլն. դրամ, որից՝ 7,001.1 մլն. դրամը կամ 59.8%-ը բաժին է ընկնում ավտոմատ համակարգի միջոցով արձանագրված խախտումների գծով եկամուտներին:</p> <p>2014թ.-ի 10 ամսվա ընթացքում շահագործվել է միջին հաշվով 133 արագաչափ և 86 խաչմերուկ:</p> <p>Արձանագրվել է 1,026,351 վարչական իրավախախտում, որը 2013թ.-ի տարեկան նույն ցուցանիշը գերազանցում է 165496-ով կամ 19.2%-ով:</p> <p>Ավտոմատ համակարգի միավորի հաշվարկով արձանագրվել է 4,686 իրավախախտում կամ նախորդ տարվա՝ 2013թ.-ի նույն ցուցանիշից՝ 1,292-ով, 21.6%-ով պակաս: Նշանակված տուգանքի միջին չափը կազմել է 9,199 դրամ մինչև հուլիսի 26-ը (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված տուգանքների չափերի փոփոխությունները ուժի մեջ մտնելու ամսաթիվի դրությամբ) և 7,967 դրամ՝ օգոստոս-հոկտեմբեր ամիսներին (նախորդ տարվա միջինից՝ 1,816 դրամով կամ 18.6 %-ով պակաս): Այսպիսով նշված համակարգի ներդրման և աստիճանաբար ընդլայնման արդյունքում</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>հետևողականորեն բարձրանում է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման արդյունավետությունը, մեծապես կրճատվում են սահմանված արագության գերազանցման դեպքերը, կարգավորվում է երթևեկությունը խաչմերուկներում: Այդ առումով հատկանշական է Երևանում (համակարգի ներդրման հիմնական բնակավայրը) մահվան դեպքերով պատահարների կրճատումը. 2011թ.ին՝ 92 մահվան դեպք, 2012թ.-ին՝ 63, 2013թ.-ին՝ 61, 2014թ.-ի 10 ամսում՝ 55: Նշված և համանման համակարգերի ներդրումն ու հետզհետե ընդլայնումը կարևոր նշանակություն ունի նաև հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման և հանցավորության դեմ պայքարի գործում ոստիկանության սահմանափակ ուժերն ու միջոցներն արդյունավետ կառավարելու, ընդունված նորմերից և կանոններից շեղումներն ու խախտումները կանխարգելելու, խախտումների դեպքերում համարժեք պատասխանատվության անխուսափելիության սկզբունքն անշեղորեն իրագործելու, «վարորդ – ոստիկան» շփումը կրճատելու, համակարգում կոռուպցիոն ռիսկերը հնարավոր նվազագույնի հասցնելու առումներով:</p>
183.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր	Առաջարկություններ 2015թ պետական բյուջե եկամուտների մասով	Հարկ է նկատի ունենալ, որ տնտեսագիտորեն ՀՆԱ-ի միավոր աճը չի հանգեցնում հարկերի միավոր աճի:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հրանտ Բագրատյան	<p>1. 2015-ի բյուջեի եկամուտները 2014-ի համեմատ ավելացվել են 4.2%-ով (1184.5 մլրդ դրամ), հարկային եկամուտները՝ 3%-ով, այն դեպքում երբ գնաճը 4% է, իսկ տնտեսական աճը՝ 4.1%: Այսպիսով, բյուջեի եկամուտները 2.9, իսկ հարկային մուտքերը 4.1%-ով աճելու տեղ ունեն: Պետք է սահմանել (կարելի է նույնիսկ օրենքով), որ ՀՀ յուրաքանչյուր հաջորդ տարվա բյուջեի նվազագույն թիվը պետք է լինի. $P_{t1} = P_{t0} \times I_{t1} \times I_{icp}$, որտեղ P_{t0}-ն հաշվետու տարվա բյուջեն է, I_{t1}-ը՝ տնտեսական աճն է ծրագրավորվող տարում, իսկ I_{icp}-ն՝ միջին գնաճը ծրագրվորվող տարում: Այս առումով 2015թ. նվազագույն բյուջեն պետք է կազմի. $1135.9 \times 1.041 \times 1.04 = 1229.8$ մլրդ դրամ՝ 1184.5-ի փոխարեն: Հետևաբար 2015-ի բյուջեի եկամուտները պետք է ավելացնել առնվազն 45.3 մլրդ դրամով:</p>	<p>Միայն ՀՆԱ-ի մեջ հարկունակ ճյուղերի կշռի մեծացման, ՀՆԱ-ի աճի համեմատ այդ ճյուղերի առաջանցիկ աճի և/կամ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ աճերի պայմաններն են բարենպաստ մակրոտնտեսական միջավայր ստեղծում հարկերի հավաքագրման համար:</p>
184.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>2. Անհասկանալի են բյուջետային ուղերձի II մասի 3.1. աղյուսակում (2015թ. պետական բյուջեի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչները) ներդրումների և սպառման մակարդակների ցուցանիշները: Դրանց գումարը չի կարող գերազանցել ՀՆԱ-ն: Եթե սպառման մակարդակն ավելացել է մասնավոր տրանսֆերտների կամ պարտքի հաշվին, ապա պետք է համապատասխան ձևակերպում տալ:</p>	<p>Ամբողջական պահանջարկի բաղադրիչների՝ սպառման և ներդրումների գումարը կարող է հարյուրից մեծ լինել, քանի որ ծախսային բաղադրիչների մեջ ներառվում է նաև զուտ արտահանումը, որը ՀՀ-ում դեռևս բացասական է:</p> <p>Ինչ վերաբերում է սպառման մակարդակի ավելացմանը, հայտնում ենք, որ 2014-2015թթ. կանխատեսվել է սպառման մակարդակի նվազում, այլ ոչ թե ավելացում:</p>
185.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր	<p>3. Ուղերձում 2015թ. արդյունաբերության աճը «կանխատեսվել է» 3.7%: Հիմնավորումը բացակայում է:</p>	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հրանտ Բագրատյան		Կանխատեսումներն իրականացվել են վիճակագրական տարբեր մեթոդներով, որոնք գնահատում են ճյուղերի պատմական ներուժը, այնուհետև ճշգրտվել են ճյուղերին ուղղված քաղաքականության ազդեցության գնահատականներով:
186	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	4. Ուղերձում 2015թ. գյուղատնտեսության աճը «կանխատեսվել է» 3.4%: Հիմնավորումը բացակայում է:	
187	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	5. Ուղերձում 2015թ. շինարարության աճը «կանխատեսվել է» 2%: Հիմնավորումը բացակայում է:	
188	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	6. Ուղերձում 2015թ. ծառայությունների և առևտրի աճը «կանխատեսվել է» 3.7%: Հիմնավորումը բացակայում է:	Ծառայությունները հիմնականում հանդես են գալիս որպես տնտեսության մյուս բոլոր ճյուղերին սպասարկող ենթաճյուղ, ուստի ծառայությունների կանխատեսումը հիմնված է մյուս ճյուղերի աճերի կանխատեսումների վրա, ինչպես նաև հաշվի է առնվել պատմական իներցիան:
189	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	7. Ուղերձում 2015թ. արդյունաբերության աճը «կանխատեսվել է» 3.7%: Հիմնավորումը բացակայում է:	185 հարցը կրկնվում է:
190	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	8. Ամբողջովին խառնած են աշխատավարձերի աճի թվերը: Այսպես, 2014թ. 7 ամիսներին պետական և ոչ պետական տնտեսությունների մասով հրապարակված են 142055 և 194589 դրամ թվերը: Սա չի համապատասխանում իրականությանը: ԱՎԾ իրավունք չունեն 5% կուտակայինի թվերը դիտարկել	Աշխատավարձի աճի ցուցանիշը, ըստ մեր ունեցած տեղեկատվության*, համադրելի ցուցանիշ է, այսինքն՝ կուտակային ազդեցությունը չեզոքացված է, իսկ աշխատավարձի 7,4 տոկոս անվանական աճի և 3,4 տոկոս ՍԳԻ աճի դեպքում, իրական աշխատավարձի աճը

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>իրև եկամուտ: Նույն ձևով սխալ է 2014թ. 7 ամիսների 3.9% իրական աշխատավարձի աճը: Եթե հանենք կուտակայինը, ապա իրական աշխատավարձի աճ միգուցեև չկա:</p>	<p>ստացվում է 3,9 տոկոս: * Ճշգրտվել է ԱՎԾ-ի հետ: Միևույն ժամանակ, ցուցանիշի մասով կարևորում ենք ԱՎԾ-ի դիրքորոշումը:</p>
191.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>9. Խղճուկ շարադրանք է ներկայացված կապիտալ ներդրումներ բաժնում: Ուղղակի անհավանական է, որ ոչ բյուջեի նախագծում և ոչ էլ ուղերձում կապիտալ ներդրումներին առանձին գլուխ հատկացված չէ:</p>	<p>Կապիտալ ներդրումների մասով մակրոտնտեսական կանխատեսումներում անդրադարձ է կատարվել պետական և մասնավոր կապիտալ ներդրումների աճի և նվազման միտումներին: Պետական ներդրումների ուղղություններին առավել մանրամասն անդրադարձ է կատարված օրենքի հավելվածներում և ուղերձի ծախսերի բացատրագրում:</p>
192.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>10. Անհասկանալի է ուղերձի զուտ արտահանում բաժինը: Մտնում ենք ԵՏՄ: Կառավարությունն ասում է, որ նոր հնարավորություններ են բացվում: Մինչդեռ շարադրանքն այս բաժնում նույնն է, ինչ անցյալ կամ նախանցյալ տարի:</p>	<p>ԵՏՄ անդամակցության ազդեցությանը անդրադարձ չի կատարվել, քանի որ պայմանագրերը բյուջեի ուղերձը մշակման ժամանակ, ինչպես նաև բյուջեն ներկայացնելուց ստորագրված չեն եղել:</p>
193.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>11. Ուղերձում նորից խոսվում է գնաճը կայունացնելու, թիրախավորման մասին: Վեջին տարիներին ՀՀ տնտեսական աճի դանդաղեցման պատճառներից մեկն էլ ցածր գնաճն է: Մեր երկրի տնտեսական զարգացման այս փուլում գնաճը չի կարող ավելի փոքր լինել, քան տնտեսական աճը:</p>	<p>Ջարգացած երկրներում գնաճի թիրախը 2%-ի շրջանակներում է, իսկ, զարգացող երկրներն, անշուշտ, թիրախավորում են փոքր-ինչ ավելին (3%-4%), քան զարգացած երկրները, քանի որ արտադրողականության աճը, տնտեսական աճ ապահովելուն զուգահեռ, գնաճային միջավայրի վրա ճնշումներ է ստեղծում: Նշվածից բարձր գնաճը ներդրողների, սպառողների մոտ գների անկայունության սպասումներ է ձևավորում, ինչն էլ բացասական է</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>անդրադառնում տնտեսական ակտիվության վրա: Այս առումով տնտեսագետների մոտ առկա է համակարծրություն. ցածր և կայուն գնաճը երկարատև ժամանակահատվածում բարձր տնտեսական աճի համար կարևոր նախադրյալ է:</p> <p>Հայաստանի կենտրոնական բանկը տարիներ շարունակ նպատակադրում է ցածր և կայուն գնաճ, սակայն տնտեսական աճի տեմպերն այդ ժամանակահատվածում տարբեր են եղել. 2001-2008թթ՝ միջին տարեկան տնտեսական աճը գերացանցել է 10%-ը, իսկ 2010-2013թթ՝ մինչև 5%-ի սահմաններում:</p>
194.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բազրատյան	<p>12. Բավականին խաբուսիկ է ֆինանսական շուկա բաժնում կատարած «վերլուծությունը»: Այսպես ԿԲ հայտարարություններն առ այն, որ վեջին տարիներին սպրեդը փոքրացել է (աղյուսակ 3.5.2.) չի համապատասխանում իրականությանը: Այդ վարկերի ուղղակի տոկոսը 4 տարում իջել 0.7 տոկոսով, ավանդներն էլ բարձրացել են 1.6%-ով, բայց բանկերը մտցրել են քարտերի տրամադրման, փողի կանխիկացման, ազատ մնացորդի նկատմամբ պահանջների և այլն այնպիսի նորմեր (որոնք, ի դեպ, վերլուծված չեն), որ ի վերջո վարկավորման տոկոսադրույքի իջեցումը ոչ մի դրական հետևանք էլ չի թողնում:</p>	<p>Վերջին 4 տարիներին ՀՀ բանկային համակարգի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված ավանդների միջին կշռված անվանական տոկոսադրույքը աճել է 1.6 տոկոսային կետով, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկերի միջին կշռված տոկոսադրույքը՝ նվազել 0.7 տոկոսային կետով: Արդյունքում վարկերի և ավանդների անվանական տոկոսադրույքների սփրեդը նվազել է 2.3 տոկոսային կետով: Ավանդների տոկոսադրույքների աճը և վարկերի տոկոսադրույքների նվազումը բացատրվում են ՀՀ բանկային համակարգում բանկերի միջև մրցակցության խորացմամբ, ինչն ուղեկցվել է բանկերի գործունեության շահութաբերության նվազմամբ: Մասնավորապես, մրցակցությունը բնութագրող Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը ՀՀ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Առաջարկության դիրքորոշումը
			<p>բանկային համակարգի կողմից ներգրաված ավանդների և տրամադրված վարկերի համար 2010թ. համեմատ նվազել են համապատասխանաբար 38.3 և 25.2 կետով և կազմել 762.4 և 731.6 կետ՝ բնութագրելով բանկային համակարգում մրցակցության բարձր մակարդակ: Ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 1.0 և 3.2 տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար 1.1% և 7.1%: Բանկերի միջև մրցակցության խորացման պայմաններում արձանագրվել է նաև բանկերի կողմից մատուցվող ծառայությունների գծով գանձվող ոչ տոկոսային վճարների նվազում, մասնավորապես վերջին 4 տարիներին միջնորդավճարների և ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 0.9%՝ փաստելով նաև վարկերի էֆֆեկտիվ տոկոսադրույքների նվազման մասին:</p>
195.	«Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան»	13. Անհասկանալի է բյուջեի ինչպես եկամուտների, այնպես էլ ծախսերի բաժանումը համախմբված և պետական բյուջեների միջև: Այսպես, ՀԲ եկամուտներն են 1221.3 մլրդ դրամ, իսկ պետականինը՝ 1184.5: Այսինքն, բոլոր ՏԻՄ մարմինների բյուջեները կազմում են սոսկ 36.8 մլրդ դրամ: ՏԻՄ մարմինների ծախսերը կազմում են 125.7 մլրդ դրամ: Այսինքն, ինքնաձախսաձածկման մակարդակը 29.2% է: Մինչդեռ ուղերձում ՏԻՄ մարմինների եկամուտները ցույց են տրված 118.4 մլրդ	«Առ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում համախմբված բյուջեի եկամուտների գումարները ներկայացված են «Առ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան: Պետական բյուջեից համայնքներին պաշտոնական դրամաշնորհների և պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման տեսքով տրվող միջոցները նշված օրենքի 28.1-ին և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		դրամ: Դա նշանակում է, որ 81.3 մլրդ դրամ ֆիննախը միջոցներ է հատկացնելու ՏԻՄ մարմիններին: Ի՞նչու են այս 81.3 մլրդ դրամը քննվել իբրև ՏԻՄ եկամուտ:	28.2-րդ համաձայն դասվում են համայնքների բյուջեների եկամուտների շարքին:
196	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	14. Անընդունելի է աղյուսակ 5-ում (ուղերձի 124-րդ էջ) ԱԱՀ հաշվարկման տվյալների բազան՝ նկատի ունենալով ՀՆԱ-ում նվազեցման ենթակա գումարները (2013՝ 1463.7 մլրդ դրամ, 2014՝ 1486.8 և 2015՝ 1601.7 մլրդ դրամ): Շատ արագ է աճում: Որպես հիմնական գործոն 125-րդ էջում խոսվում է 58.35 մլն դրամ շեմի մասին: Իբր սրանք փող չեն բերում բյուջե: Բայց ու՞զում ենք, որ բերեն: Ի՞նչու ենք 3.5% շրջհարկի շեմը իջեցնում 1%-ի: Պետք է բարձրացնել 5-6%-ի, բայց ոչ մի փաստաթուղթ չպահանջել: Շեմն էլ կարելի է սահմանել 125 մլն դրամ:	ԱԱՀ-ի հաշվարկման բազայում նվազեցման ենթակա գումարների փոփոխությունները պայմանավորված են տնտեսության առանձին ճյուղերի զարգացումներով, մասնավորապես ՀՆԱ-ի՝ ԱԱՀ-ով չհարկվող մասի գնահատված ծավալի չափով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքն ամբողջությամբ (պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և այլն) կամ ոչ լրիվ ծավալով է (գյուղատնտեսություն, շինարարություն, առևտուր, տրանսպորտ և այլն) ենթակա ԱԱՀ-ով հարկման: Միաժամանակ նվազեցվում է մինչև 58.35 մլն դրամ շրջանառություն ունեցող կազմակերպությունների արտադրության թողարկած արտադրանքի ծավալները (ոչ որպես հիմնական գործոն, բացատրագրում նշվում է, որ վերջինս կազմում է արդյունաբերության ճյուղի թողարկման 1,3%-ը, առևտրի ճյուղում ապրանքաշրջանառության՝ 11,3%-ը, կապի ճյուղում՝ 0,6%-ը): Ձեր կողմից նշված աճերը հիմնականում պայմանավորված են նվազեցվող ճյուղերի առաջանցիկ աճերով:
197.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	15. Բյուջետային ուղերձի ԱԱՀ, ակցիզային հարկի և շահութահարկի հաշվարտկերն անընդունելի են: Դրանք հաշվարկելիս գոնե 1%-ի ջանք չի	Եկամուտների բացատրագրի առանձին հարկատեսակների կանխատեսումները իրականացվել են ըստ տնտեսական միտումների և զարգացումների (ընթացիկ տար-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Նախատեսված ստվերը կրճատելու ուղղությամբ: Անընդունելի են ինչպես ԱԱՀ, այնպես էլ շահութահարկի նկատմամբ փաստացի դրույքաչափերի մեծությունները (համապատասխանաբար 15.08% և 11.2%): Չհարկվող ճյուղերը հանելուց հետո փաստացի դրույքաչափերի իջեցումն առանց լուրջ բացատրության անընդունելի է: Մասնավորապես, ԱԱՀ-ի մասով նշվում է, որ այդ 15.08%-ը հետևանք է փաստացի և անվանական դրույքաչափերի տարբերության: Սա էլ պայմանավորված է նրանով, որ կան հարկային արտոնություններ: Դրանից հետո 2013-ի փաստացի հարկումը նույնականացվում է 2015-ի համար: Այդ դեպքում, ո՞րն է ստվերը: Անընդունելի է:</p>	<p>վա սպասողական մակրոտնտեսական ցուցանիշներ, ընթացիկ տարվա սպասողական հարկային մուտքեր, որոնք գնահատվել են մի կողմից հաշվի առնելով հունվար-օգոստոս ամիսների առանձին հարկատեսակների գծով մուտքերը, մյուս կողմից այդ հարկերի հավաքագրման սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների սեզոնայնության գործակիցները և առաջիկա տարվա համար ծրագրավորված մակրոտնտեսական միջավայրի զարգացումները):</p> <p>Առանձին հարկերի կանխատեսումների համար ԱՎԾ-ի կողմից հաշվարկվող ցուցանիշներից ընտրվում են տվյալ հարկատեսակի հարկման բազայի մոտարկման ցուցանիշները: Վերոհիշյալ ցուցանիշները չեն նույնականանում հարկային օրենսդրությամբ սահմանվող հարկման բազաների հետ: Ընդհանուր առմամբ փաստացի և անվանական (օրենքով սահմանված) դրույքաչափերի տարբերությունը օրինաչափ է, պայմանավորված օրենսդրությամբ սահմանված արտոնությունների, հարկման օբյեկտում չներառվող գործարքների ծավալով, որը առկա վիճակագրական ցուցանիշներով գնահատել հնարավոր չէ:</p> <p>Ինչ վերաբերում է ստվերի գնահատմանը, ապա այն արտացոլված է եկամուտների բացատրագրի ըստ վարչարարության և օրենսդրության ներկայացված ցուցանիշում, որը կազմում է 28,5 մլրդ. դրամ:</p>
198	ՀՀ Ազգային ժողովի	16. Հնարավոր չէ ունենալ առաջընթաց և պայքար	Եկամտային հարկը ՀՀ հարկային համակարգ ներդրվել

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավոր Հրանտ Բագրատյան	ստվերի դեմ եկամտային հարկի և շահութահարկի տարբեր դրույքների պայմաններում: Դրանք պարզապես պետք է հավասար լինեն: Ներկայումս դրանք համապատասխանաբար կազմում են 31% և 20%:	է 2013 թվականից՝ նպատակ ունենալով միասնականացնել եկամտահարկն ու պարտադիր սոցիալական վճարները: Եկամտային հարկով սահմանված 24,4%, 26% դրույքաչափերը գնահատված մեծություններ են, որի 20%-ը դիտարկված է որպես եկամտահարկի դրույքաչափ, ինչը համարժեք է շահութահարկի գործող դրույքաչափին:
199.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	17. Անհասկանալի է ՀՀ ԿԲ-ից ակնկալվելիք մուտքերի բացակայությունը: Նորմալ երկրներում ԿԲ-երն ապահովում են բյուջեների եկամուտների 10-15%-ը: Պետք է հասնել այն բանին, որպեսզի ԿԲ-ն բյուջեին փոխանցի 25 մլրդ դրամ (շահույթ և միջոցներ մասնավոր տրանսֆերտների ստերիլիզացիայից):	ՀՀ 2015թ պետական բյուջեի նախագծում ՀՀ կենտրոնական բանկից մուտքեր չեն նախատեսվել՝ ելնելով բանկի կողմից կանխատեսվող 2014 թվականի իր գործունեության արդյունքներից:
200.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	18. Ինչու են 2015-ի մաքսատուրքերը գնահատված 53.5 մլրդ դրամ կամ 130 մլն դոլար: Մենք լինելու ենք ԵՏՄ տարածքում և ստանալու ենք 1.13%-ը՝ առնվազն 250 մլն դոլար: Այսպիսով այստեղ 49 մլրդ հաշված չէ:	ՀՀ 2015թ պետական բյուջեի նախագիծը ներկայացվել է Ազգային ժողով Սահամանադրությամբ նախատեսված ժամկետներում՝ հոկտեմբերի 2-ին: Նշված նախագիծը կազմելու ժամանակահատվածում ԵՏՄ-ի հետ լուծված չէր համաձայնագրերի հարցը և իրավական տեսակետից, առանց ԵՏՄ-ին անդամակցության փաստաթղթի վավերացման, հիմքեր չկար նախագծում դրա ազդեցությունը արտացելելու համար:
201.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	19. Ինչու են բնապահպանական և բնօգտագործման վճարները գնահատվել 30 մլրդ դրամ նախորդ տարվա 33-ի փոխարեն: Անընդունելի է: Պետք է ավելացնել առնվազն 10 մլրդ դրամ:	Այս եկամտատեսակից մուտքերի գերակշիռ մասը կազմում է ռոյալթին (արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>համար):</p> <p>2015 թվականի համար առանձին հարկատեսակների ըստ միտումների մուտքերը կանխատեսելիս հաշվի են առնվում ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածի հարկային մուտքերը, ինչպես նաև տվյալ հարկատեսակի գծով ընթացիկ տարվա սպասողականը: 2014 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ողյալթիի գծով մուտքերը շուրջ 50%-ով պակաս են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Այս հարկատեսակի գծով հարկային մուտքերի թերհավաքագրումը որոշակիորեն պայմանավորված է ինչպես համաշխարհային շուկայում հանքահումքային ապրանքների գների անկմամբ (մասնավորապես՝ պղնձի գների մասով տարվա սկզբից արձանագրվել է ավելի քան 7% գնանկում), այնպես էլ հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար արձանագրված հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի թողարկման շուրջ 9% անկմամբ</p>
202	«Կ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	20.Ի՞նչու է դեֆիցիտը նախատեսված 2.34% կամ 114.1 մլրդ դրամ: Այն պետք է նախատեսել 2.99% կամ 145.5 մլրդ դրամ: Այսպիսով այստեղ կարելի է ապահովել լրացուցիչ մուտք 31.4 մլրդ դրամ: Սա նաև մի փոքր կբարձրացնի գնաճը և կնպաստի տնտեսական աճի արագացմանը:	<p>Իրականացվող հարկաքյուցեության քաղաքականությունը տնտեսական աճի տեմպերի դանդաղման և աճի գծով նվազման դիսկերի պարագայում նպատակաուղղված է լինելու տնտեսության խթանմանը՝ միաժամանակ չխաթարելով պետական պարտքի կայունությունը:</p> <p>Եկամտային քաղաքականության մասով առաջիկա</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Ա կառավարության դիրքորոշումը
			<p>տարվա համար հարկեր/ՀՆԱ ցուցանիշի գծով նախատեսվել է 0.2 տոկոսային կետով աճ ընթացիկ տարվա համար ծրագրավորվածի համեմատ:</p> <p>Ընդլայնող ծախսային քաղաքականությամբ պայմանավորված ծրագրվել է ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի պակասուրդի 2,3 տոկոս մակարդակ, որը 0,3 տոկոսային կետով գերազանցում է միջազգային պրակտիկայում ընդունված մոդելներով գնահատված պետական բյուջեի դեֆիցիտը կայունացնող պարտքի մակարդակը: Նախորդ տարիներին ծրագրավորվածի համեմատ փաստացի ցածր դեֆիցիտի ցուցանիշի կատարողականի պայմաններում թուլացել է պարտքի կայունության լարվածությունը, որը հնարավորություն է ընձեռել ծրագրելու հնարավորինս բարձր դեֆիցիտ:</p>
203	«Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	21. Բյուջետային ուղերձում ընդհանրապես վերլուծած չէ գույքահարկը: Մինչդեռ սա ևս եկամուտները բարձրացնելու լուրջ աղբյուր է:	Ըստ «Ա կառավարության համակարգի մասին» «Ա օրենքի 28.1-ին հոդվածի՝ համայնքների վարչական տարածքում գտնվող գույքի համար վճարվող գույքահարկը 100%-ով ամրագրված է համայնքների բյուջեների եկամուտներին և ներկայումս իրավական տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես պետական բյուջեի եկամուտները բարձրացնելու լուրջ աղբյուր:
204	«Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	22. Պետական բյուջեի եկամուտների մեջ պարզ չեն պետական գույքի վաճառքից (սեփականաշնորհումից) ստացվող միջոցները:	«Ա 2015թ. պետական բյուջեի նախագծով նման մուտքերի ներգրավում պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար չի նախատեսվում: Ընդ որում, ըստ «Ա կառավարության համակարգի մասին» «Ա օրենքի պետական գույքի սեփականաշնորհումից մուտքերը չեն դասվում բյուջեների եկամուտների շարքին:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
205	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	23. ՀՀ պետական բյուջեն եկամուտների մասով պետք է հաստատել ամբողջությամբ և ըստ առանձին հարկատեսակների:	ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում բյուջետային եկամուտների (այդ թվում նաև հարկային եկամուտների) հաստատվող գումարները ներկայացված են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված ձևաչափով, այն է՝ նշված օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դասակարգմամբ (հարկային եկամուտներ և պետական տուրքեր, պաշտոնական դրամաշնորհներ, այլ եկամուտներ):
206	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	24. ՀՀ 2015թ. պետական բյուջեի մասին օրենքում պետք է կետ նախատեսել հետայսու բյուջեի հաշվետվությունն ըստ առանձին հարկատեսակների ներկայացնելու վերաբերյալ:	ՀՀ կառավարության կողմից Ազգային ժողով ներկայացվող տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում ներկայացվում է հարկերի փաստացի ստացված մուտքերի մասին տեղեկատվություն նաև ըստ առանձին հարկատեսակների (նախորդ տարվա փաստացի մուտքերի հետ համեմատությամբ):
207	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	25. Այսպիսով, առանց դույզն իսկ հարկային բեռը բարձրացնելու և ստվերի դեմ պայքարի 2015թ. ՀՀ պետական բյուջեի եկամուտները կարելի է ավելացնել 160.7 մլրդ դրամով (45.3+49+10+31.4+25): Ըստ իս, ՀՀ պետական բյուջեի եկամուտները պետք է հաստատել առնվազն 1345.2 մլրդ դրամ, իսկ համախմբված բյուջեինը՝ 1382 մլրդ դրամ: Ի՞սկ եթե մի փոքր էլ պայքարենք ստվերի դեմ: Դրա հետ կապված փոխենք ԱԱՀ, եկամտային հարկի և շահութահարկի	Առանձին-առանձին անդրադարձ է կատարվել այս մասում ներկայացված հաշվարկներին, ներկայացնելով մեր կողմից կիրառված մեթոդաբանությունը: Տես՝ հարկային եկամուտներին, բյուջեի դեֆիցիտին առնչվող պարզաբանումները:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		հաշվարկման բազան: Արդյունքն ավելի մեծ է լինելու:	
208	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>Առաջարկություններ 2015թ պետական բյուջեի ծախսերի մասով</p> <p>1. ՀՀ պետական բյուջեն ծախսերի գծով պետք է հաստատել 1459.3 մլրդ դրամ, իսկ համախմբված բյուջեի ծախսերի մասով՝ 1501.2 մլրդ դրամ:</p>	Առաջարկությունը չի բխում սույն ամփոփաթերթի 207-րդ կետում ներկայացված ՀՀ կառավարության դիրքորոշումից:
209	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2. Բյուջեի ծախսերի մեջ առանձին տողով պետք է հաստատել Հայաստան պետական ներդրումային սուվերեն հիմնադրամի ստեղծումը՝ նախատեսելով 150 մլրդ դրամազույգ: Այս գումարի 125 մլրդ դրամը պետք է տա կառավարությունը, իսկ 25 մլրդ-ը ՀՀ ԿԲ-ը՝ հանրապետություն փոխանցվող տրանսֆերտների մասնակի ստերիլիզացիայի հաշվին:	<p>ՀՀ կառավարությունն արդեն իսկ իրականացրել է որոշակի աշխատանքներ ներդրումային հիմնադրամներ ստեղծելու նպատակով: Մասնավորապես 2013թ. Հոկտեմբերի 3-ին ՀՀ կառավարության N 1083-Ա որոշումով հաստատվել է պետության մասնակցությունը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագրի» շրջանակում ստեղծված «Գրանատուս Վենչուր Ֆոնդ I» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում մինչև առավելագույնը 3,300,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ համախառն ներդրման չափով: «Գրանատուս Վենչուր Ֆոնդ I» ՓԲԸ-ն առաջին հայկական դասական վենչուրային հիմնադրամն է, որը գրանցված ՀՀ ԿԲ-ում: Այս հիմնադրամը ֆինանսավորում, խորհրդատվություն և կապերի լայն ցանց է տրամադրում Հայաստանում հիմնված կամ գործունեություն ծավալող տեխնոլոգիական նորաստեղծ եւ խոստումնալից ընկերություններին: Վերջինս արդեն իրականացրել է 2 սկսնակ (ստարտափ) ծրագրեր իրականացնող</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ընկերությունների ֆինանսավորում՝ 100,000 և 500,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով:</p> <p>http://www.banks.am/am/news/interviews/10128/</p>
210.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>3. Հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձը կկազմի 55 հազ. դրամ: Հաշվարկները ցույց են տալիս, որ ավելի բարձր ՆԱ սահմանելու դեպքում եկամտահարկից ստացված լրացուցիչ մուտքերը կգերազանցեն բյուջեի ծախսերը:</p>	<p>Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության ծրագրի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված աշխատավարձի բարձրացման քաղաքականության դրույթները և նախատեսված չափերը՝ նախագծով նախատեսվում է 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձը սահմանել 55.000 դրամ:</p> <p>Նվազագույն աշխատավարձի օպտիմալ մակարդակի միջազգայնորեն ընդունված համադրումներով ՀՀ-ն ներկայումս գտնվում է 40-60% միջին մակարդակի շեմում, այսպիսով մոտենալով միջազգային կոնվենցիաներով առաջարկվող չափանիշներին, այդ թվում Եվրոպական սոցիալական վերանայված Խարտիայով սահմանված մեծությամբ:</p> <p>2014 թվականի ինն ամիսների արդյունքներով, նվազագույն աշխատավարձ/միջին աշխատավարձ հարաբերակցությունը կազմում է 40%, ընդ որում փոքր և գերփոքր տնտեսվարող սուբյեկտների տվյալները ներառված չեն միջին աշխատավարձի ցուցանիշում (վերջիններս հաշվարկելու դեպքում այս ցուցանիշն ավելի կմեծանա): Նվազագույն աշխատավարձի օպտիմալ մակարդակից ավել աճի պարագայում,</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			տնտեսությունում կառաջանան գնաճային ճնշումներ, ինչպես նաև երկրորդային ազդեցությամբ կարող է հանգեցնել ներքին արտադրության ապրանքների մրցունակության նվազման և գործազրկության աճի:
211.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	4. Ծրագրային բյուջետավորումը ձևական է: Նույն հող-վաճա-նախահաշվային ծախսերն են՝ ինչ-որ ծրագրերի անվանման տակ:	Ծրագրային բյուջետավորման բարեփոխումները ներկայումս ընթացքի մեջ են և Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած Կառավարության ծրագրի համաձայն ներկայումս աշխատանքներ են տարվում 2018 թվականից լիարժեք ծրագրային բյուջետավորման անցնելու համար պայմաններ ստեղծելու նպատակով: Պետական բյուջեի նախագծի կազմում ծրագրային ձևաչափով ներկայացումը պայմանավորված է օրենքի պահանջով և առաջիկա ժամանակահատվածում անշուշտ միջոցներ կձեռնարկվեն ծրագրերի ներկայացման ձևաչափում արդյունքային ցուցանիշների լիարժեք արտացոլման ուղղությամբ:
212.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	5. Պետք է հնարավորինս ավելացնել ՏԻՄ մարմինների բյուջեները (նրանց թողնել շահութահարկի և եկամտահարկի 50%-ը): Այս դեպքում համայնքների ղեկավարների մոտ կառաջանա շահագրգռվածություն համայնքի տարածքում տնտեսության զարգացման կապակցությամբ: Այս ձևով բյուջետային եկամուտները վերակառուցելիս ֆինանսական հոսքերի վերաբաշխումը կպակասի շուրջ 89 մլրդ դրամով:	ՀՀ 2015 թվականին պետական բյուջեից եկամտային հարկի և շահութահարկի գծով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով սահմանված մասհանումների իրականացում ՀՀ համայնքների բյուջեներին չի նախատեսված հաշվի առնելով համայնքների միջև այդ հարկերի ոչ համամասնորեն ձևավորումը, պայմանավորված հանրապետությունում տնտեսաարտադրական կարողությունների ու ազգաբնակչության, ըստ համայնքների, տարիներ ի վեր ձևավորվող խիստ անհամաչափ տեղաբաշխման հանգամանքներով: Նման պայմաններում մասհանումների համակարգը միտված կլինի սակավաթիվ,

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>հիմնականում Երևան քաղաքի ֆինանսական բազայի ամրապնդմանը՝ էլ ավելի մեծացնելով համայնքների միջև առկա ֆինանսական անհավասարության աստիճանը:</p> <p>Վերը նշված մասհանումների գործընթացը էականորեն կդժվարացնի և անարդյունավետ կդարձնի հարկ վճարողի եկամուտների ձևավորման վայրի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու անհնարինությունը, քանի որ շատ դեպքերում հարկ վճարողի գրանցման վայրը չի համընկնում հարկ վճարողի գործունեության իրականացման վայրերի հետ: Հարկ է նշել, որ դեռևս 1998-1999 թվականներին օրենքի պահանջի համապատասխան համայնքների բյուջեներին կատարվում էին եկամտահարկի գումարների մասհանումներ: Սակայն վերը նշված հիմնախնդիրների առկայությունը ցույց տվեց մասհանումների իրականացման բացարձակ անարդյունավետությունը, որից ելնելով էլ օրենքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն՝ համայնքների բյուջեներին եկամտահարկից մասհանումների կատարումը 2000 թվականից դադարեցվեց:</p>
213.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	6. Ի՞նչու են կրճատվել կրթության ծախսերը 0.3%-ով (127.5 մլրդ՝ 428-ով պակաս 2014-ից): Սա անթույլատրելի է: Կրթության ծախսերի մակարդակը պետք է անընդհատ բարձրանա մինչև կիսանի ՀՆԱ-ի 7 տոկոսը:	<p>Կրթության բնագավառի 2015թ ծախսերի՝ ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազումը պայմանավորված է հետևյալով.</p> <p>Կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով ծախսերը նվազել են 10,971.0 մլն դրամով, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականաց-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			վող կրթության վարկային ծրագրերի գծով ծախսերը՝ 1508.4 մլն դրամով: Նախագծով չի նախատեսվել 2014 թվականին «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում» ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգում» ծրագրի գծով ծախսը՝ 1226.8 մլն դրամի չափով՝ պայմանավորված նախատեսված աշխատանքների ավարտմամբ:
214.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	7. Դրա հետ միասին դպրոցներից պետք է հանել կրոնի պատմության և շախմատի դասավանդումը: Սա միջոցների վատնում է: Ներկայումս, ՏՏ տեխնոլոգիաների զարգացման հետ կապված իբրև ստեղծագործություն շախմատն իրեն սպառել է: Նման բան տեղի ունեցավ շաշկու հետ սրանից մի 30-40 տարի առաջ: Փոխարենը մտցնել ՏՏ: Կրոնը պետությունից բարձր չէ, որ դրա մասին գրվի ինչպես ընդհանուր պատմության մեջ, այնպես էլ առանձին առարկա դասավանդվի:	Կրկնվում է 177-րդ հարցը:
215.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	8. Գիտությանը հատկացվող գումարները սահմանել ՀՆԱ գննե 0.5%-ի չափով: Գիտատեխնիկական կրթության համար նախատեսված է 13.9 մլրդ դրամ: Իսկ սա կազմում է ՀՆԱ սուկ 0.28%-ը: Ի դեպ, այս 13.9 մլրդ դրամից էլ 9.8 մլրդ-ը բազային ֆինանսավորում է: 2014-ին բազային ֆինանսավորումը եղել է 71.27% (9025 մլրդ 12663-ից), իսկ 2015-ին կազմում է 70.5%:	Գիտության ծախսերը համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի չպետք է պակաս նախատեսվեն բյուջեի ծրագրվորվող տարվա եկամուտների աճից, ինչը ոչ միայն պահպանվել է այլ գերազանցվել է շուրջ 2 անգամ: 2014թ նկատմամբ 2015թ համար կանխատեսվող եկամուտների աճը կազմում է 4.9%,

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
		<p>Առաջընթաց չկա: Ավելին, թեմատիկ ֆինանսավորման համար 2014-ի 1.516 մլն-ի փոխարեն ունենք 1333 մլն դրամ: Բացատրությունն էլ տարօրինակ է. ավարտվող թեմաների հաշվետվությունների և նոր թեմաների մրցույթների միջև երկամսյա տարբերություն կա:</p>	<p>Իսկ գիտության ծախսերի աճը՝ շուրջ 10%: Ծախսերը նախատեսվել են նաև հաշվի առնելով 2015 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսվող մակարդակը: Գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորման 2015թ. ծավալների նվազումը պայմանավորված է այդ ֆինանսավորման երկամսյա պարբերականությամբ: 2015թ. հունիսի 30-ին ավարտվում է 2013-2015թթ. 130 թեմայի, իսկ օգոստոսի 30-ին՝ ևս 29 թեմայի կատարման ժամկետը: Անկախ նոր մրցույթի հայտարարման ժամկետից, դրանում հաղթած թեմաների ֆինանսավորումն անպայմանորեն պետք է սկսվի նախկին մրցույթում հաղթած թեմաների ամփոփիչ հաշվետվությունների գիտական փորձաքննությունից և ընդունումից հետո: Այդպիսի մեխանիզմը հնարավորություն է տալիս բացառել նախորդ մրցույթում ֆինանսավորված և գիտական արդյունք ցույց չտված թեմաների հետագա ֆինանսավորումը: Մրցույթի ամփոփիչ հաշվետվությունների փորձաքննությունները իրականացվում է անկախ գիտական փորձագետների և մասնագիտական խորհրդի կողմից: Առաջինները գնահատում են ձեռքբերված արդյունքների գիտական կարևորությունը, իսկ երկրորդը՝ գիտաչափական արդյունքները, այդ թվում՝ հրատարակված գիտական հոդվածների ամսագրերի ազդեցության գործակիցները, հոդվածների վրա եղած հղումները: Նշված գործընթացը ժամանակատար է և նախորդ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			մրցույթների փորձը ցույց է տալիս, որ զբաղեցնում է առնվազն երկու ամիս ժամկետ: Վերոնշյալով է պայմանավորված այն փաստը, որ թեմատիկ ֆինանսավորման ծավալների փոփոխությունը (աճում և նվազում) ունի երկամյա պարբերականություն և պարզ (մոտավոր) հաշվարկը ցույց է տալիս, որ 2015թ. այն պետք է նվազի $1.516 \cdot 10 / 12 = 1.263$:
216.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	9. Ի՞նչով բացատրել մշակույթի ծախսերի ավելացումը 23.6%-ով (21.1 մլրդ դրամից 26.1 մլրդ):	ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում «Հանգիստ, մշակույթ և կրոն» բաժնի ծախսերի ավելացումը շուրջ 7.1 մլրդ դրամով, կամ 33.7%-ով պայմանավորված է. հանգստի և սպորտի ծառայությունների ծախսերի աճով՝ 42.1 մլն դրամով; մշակութային ծառայությունների ծախսերի աճով՝ 3,928.3 մլն դրամով, ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների ծախսերի աճով՝ 2,720.2 մլն դրամով, երիտասարդական ծրագրերի ծախսերի աճով՝ 213.2 մլն դրամով և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի աճով՝ 229.2 մլն դրամով: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է . աշխատավարձի ծախսերի ավելացմամբ՝ 1,823.7 մլն դրամով, «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների իրականացման ծախսերի նախատեսմամբ՝ 2,000.0 մլն դրամի չափով, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված թեմատիկ ուղղություններին համապատասխան նոր հեռուստատեսային հաղորդաշարերի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>և հաղորդումների պատրաստման և ձեռքբերման ծախսերի ավելացմամբ՝ 1,359.6 մլն դրամով, Հանրային հեռուստաընկերության առևտրային գովազդի դադարեցման հետևանքով եկամուտների փոխհատուցմամբ՝ 840.0 մլն դրամով, Հայաստանի Հանրապետությունում թվային հեռուստահեռարձակման ապահովման շրջանակներում հանրապետական սփոման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալության ծախսերի նախատեսմամբ՝ 228.6 մլն դրամի չափով, մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերի ավելացմամբ՝ 200.0 մլն դրամով և այլն:</p>
217.	«Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	10. Գյուղատնտեսության ոլորտում կրկին սուբսիդավորվում են վարկերի տոկոսները (1.163 մլրդ դրամ 2014-ի 872.5-ի փոխարեն), պարարտանյութերը (1829.4 մլրդ դրամ) և դիզվառելիքը (1260.6 մլրդ դրամ): Փաստորեն այս ապրանքների գծով շուկան չի կայանում:	<p>«Կառավարությունը մատչելի գնով ազոտական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերի հիմնական խնդիրը ոչ թե նշված ապրանքատեսակների գծով շուկայի կայացումն է, այլ գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական նյութական միջոցների գների սուբսիդավորման միջոցով հողօգտագործողներին մատչելի գնով անհրաժեշտ պարարտանյութերի ձեռքբերման հարցում աջակցելը և գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային ու արդյունավետ օգտագործման մակարդակի շարունակական բարձրացման ապահովումը, գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալների ավելացումը,</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը նպաստելն է:
218.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	11. ՏԻՄ մարմինների բյուջետային եկամուտների առաջարկվող փոփոխության արդյունքում վերախմբագրել ՀՀ 2015թ. պետական բյուջեի մասին օրենքի 10-րդ հոդվածը:	Ելնելով Ձեր՝ սույն ամփոփաթերթիկի 212-րդ հարցի կապակցությամբ ՀՀ կառավարության կողմից հայտնած դիրքորոշումից, գտնում ենք, որ այդ առումով «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի 10-րդ հոդվածի վերախմբագրման անհրաժեշտություն չկա:
219.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Գիտությանն ուղղված ծախսերն ավելացնել՝ հասցնելով Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի առնվազն 1 % մակարդակի:	Գիտության ծախսերը, համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի, չպետք է պակաս նախատեսվեն բյուջեի ծրագրավորվող տարվա եկամուտների աճից, ինչը ոչ միայն պահպանվել է, այլ գերազանցվել է շուրջ 2 անգամ: 2014թ նկատմամբ 2015թ համար կանխատեսվող եկամուտների աճը կազմում է 4.9%, իսկ գիտության ծախսերի աճը՝ շուրջ 10%: Ծախսերը նախատեսվել են նաև՝ հաշվի առնելով 2015 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսվող մակարդակը:
220	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն» ծրագրի համար սահմանված ֆինանսավորման գումարը (601500,0 հազ. դրամ) հնգապատկել:	Միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է, որ յուրաքանչյուր տարի ծրագրին ուղղված միջոցները ավելանում են: Յուրաքանչյուր հաջորդ տարվա ֆինանսական միջոցները նախատեսվում է հիմք ընդունելով նախորդ տարվա ծրագրի կատարողականը և ոլորտի կողմից ծրագրով նախատեսված գործիքների նկատմամբ ձևավորված պահանջարկով: Պահանջարկի մեծացման դեպքում

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			կամ նոր գործիքների ձևավորելու ու ներդնելու պարագայում նոր նպատակահարմար կլինի քննարկել ֆինանսական միջոցների կտրուկ ավելացման հարցը:
221.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում հոդվածով սահմանված 1 163 013,7 հազ. ՀՀ դրամը ավելացնել առնվազն երկու անգամ;	<p>ՀՀ 2015թ. պետական բյուջեի նախագծով գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման համար նախատեսված 1163.0 մլն դրամը շուրջ 33.3%-ով ավելացվել է 2014թ. համար նախատեսված գումարից, որը պայմանավորված է գյուղացիական տնտեսությունների տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը 4%-ի փոխարեն 6 տոկոսային կետի չափով սուբսիդավորման անհրաժեշտությամբ:</p> <p>2015թ. համար նախատեսված գումարը հաշվարկվել է ելնելով տարեկան 15 մլրդ դրամ վարկավորման գումարի անհրաժեշտությունից:</p>
222.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Բյուջեի նախագծում նախատեսել համապատասխան ֆինանսավորում գյուղատնտեսական նշանակության յուրաքանչյուր հեկտար հողի համար 100,000 ՀՀ դրամ գումար հատկացնելու նպատակով՝ որպես հասցեական ֆինանսական օժանդակություն:	Գյուղատնտեսական մշակաբույսերի 2014թ. փաստացի ցանքատարածությունները կազմել են 332.7 հազ. հա (հաշվի չեն առնված պտղատու և խաղողի այգիների տարածքները, որոնք 2013թ. կազմել են 40.2 հազ. և 17.4 հազ. հա): Առաջարկվող սուբսիդավորման պարագայում կպահանջվի շուրջ 33.27 մլրդ դրամ, որը ներկայում իրատեսական չէ, հաշվի առնելով ՀՀ 2015թ. պետական բյուջեի մուտքերի ծրագրավորված մակարդակը:
223.	ՀՀ Ազգային ժողովի	Բյուջեի նախագծում նախատեսել համապատասխան	ՀՀ կառավարության 15.05.2014թ. N511-Ա որոշմամբ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	<p>պատգամավոր Միքայել Մելքունյան</p>	<p>Ֆինանսավորում սահմանամերձ բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության յուրաքանչյուր հեկտար հողի համար 200,000 ՀՀ դրամ գումար հատկացնելու նպատակով՝ որպես հասցեական ֆինանսական օժանդակություն:</p>	<p>հաստատված ՀՀ կառավարության ծրագրում ընդգրկված է «գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացումը, այդ թվում սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներում հացահատիկային մշակաբույսերի մշակման սուբսիդավորման միջոցով» միջոցառումը:</p> <p>Միաժամանակ, ՀՀ կառավարության կողմից ՀՀ սահմանամերձ բնակավայրերում կիրառվում են մի շարք արտոնություններ (որոշ սահմանամերձ համայնքներում հողի հարկի զիջում, ոռոգման ջրի 50% զեղչի կիրառում, (ՀՀ կառավարության 21.03.2013թ. N 271-Ն և 27.03.2014թ. N 338-Ա որոշումներ)) և այլն:</p> <p>Հարկ է նշել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունվել է «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծը, որով նախատեսվում է սահմանամերձ համայնքներում մշտական բնակություն ունեցող անձանց սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի եւ ոռոգման ջրի վարձավճարների մասնակի փոխհատուցում:</p> <p>Առաջարկությունը ներկայում չի ընդունվել հաշվի առնելով վերոգրյալ արտոնությունների շրջանակը, ինչպես նաև ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակը և ծախսերի առաջնահերթությունը:</p>
224.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր</p>	<p>Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ</p>	<p>ՀՀ համայնքների բյուջեներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Միքայել Մելքումյան	օրենքով դոտացիաներ տրամադրելու և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2013թ. Բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով գյուղական համայնքների համար նախատեսված հատկացումները ավելացնել 50%-ով համամասնորեն:	ըստ առանձին համայնքների բաշխման հաշվարկները իրականացվում են «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:
225	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Բյուջեի նախագծում նախատեսել համապատասխան ֆինանսավորում 2015 թվականին բազային կենսաթոշակների չափը առնվազն 1,5 անգամ ավելացնելու նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 458.5 հազ. մարդու վճարել աշխատանքային կենսաթոշակ, իսկ հիմնական կենսաթոշակի չափը սահմանել 16.0 հազ. դրամ: Հիմնական կենսաթոշակի չափը առնվազն 1,5 անգամ ավելացնելու դեպքում կամ 24.0 հազ. դրամ սահմանելու դեպքում լրացուցիչ ծախսը կկազմի 44.5 մլրդ դրամ, որի ընդունումը իրատեսական չէ: Միաժամանակ հարկ է նշել, որ կենսաթոշակների չափերի ավելացումը ՀՀ կառավարության ծրագրային առաջնահերթություններից մեկն է, ինչն արտացոլված է նաև ՀՀ 2015-2017թթ ՄԺԾԾ-ում, որով առկա ֆինանսական ռեսուրսների շրջանակում նշված տարիների համար ծրագրվել է թե հիմնական կենսաթոշակի, թե աշխատանքային ստաժի 1 տարվա արժեքի ավելացում:
226	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Բյուջեի նախագծում նախատեսել համապատասխան ֆինանսավորում «Նաիրիտ գործարան» փակ բաժնետիրական ընկերության վերագործարկմանը պետական մասնակցության ապահովման համար:	«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի վերագործարկմանը պետական աջակցություն ցուցաբերելու և այդ նպատակով համապատասխան ֆինանսավորում հատկացնելու հարցին նպատակահարմար է անդրադառնալ ընկերության վերագործարկման ներդրումային ծրագրի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			վերաբերյալ հնարավոր ներդրողների հետ վերջնական պայմանավորվածության արդյունքով:
227	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» հոդվածով նախատեսված 1485148,6 հազ. ՀՀ դրամը կրկնապատկել:	Առաջարկությունը չի ընդունվել: Ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից, հնարավոր չէ 2015 թվականի պետական բյուջեով ավանդների դիմաց փոխհատուցման համար նախատեսել լրացուցիչ 1.5 մլրդ դրամ: Միաժամանակ, 2014-2017 թվականների ՀՀ կառավարության ծրագրով (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշում) նախատեսվում է իրականացնել ԽՍՀՄ խնայբանկում մինչև 1993 թ. ներդրված ավանդների դիմաց սոցիալապես խոցելի ավանդատուներին օգնության տրամադրման շարունակական ծրագրեր:
228	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Բյուջեի նախագծում նախատեսել համապատասխան ֆինանսավորում ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների էլեկտրաէներգիայի և գազի վարձավճարների փոխհատուցման համար:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի նոյեմբերի 20-ին երկրորդ ընթերցմամբ ընդունված «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի դրույթներին համապատասխան պետական բյուջեից սահմանամերձ համայնքերին պետական աջակցության համար Նախագծի վերջնական տարբերակում նախատեսված է շուրջ 928,9 մլն դրամ:
229	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյան	«Հայաստանի Ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ը Հանրապետությունում ազգային մատենագիտության, մամուլի մատենագիտական տեղեկատվության ու վիճակագրու-	Հայաստանի Ազգային գրապալատի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման,

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>թյան, սոցիոլոգիական հետազոտությունների, կենտրոնացված քարտազրացուցակավորման, ինչպես նաև համահայկական տպագիր արտադրանքի, անձեռնմխելի ազգային արխիվային ավանդադրված ֆոնդի պահպանության կենտրոնն է, որտեղ պահպանվում է գալիք սերունդների համար որպես ավանդ 1920թ-ից հետայսու Հանրապետությունում ու Սփյուռքում լույս տեսած տպագիր ամեն տեսակ նյութերի ավելի քան մեկ միլիոն հաշվվող անձեռնմխելի եզակի արխիվային հավաքածուն: Գրապալատն այսօր գտնվում է անմխիթար վիճակում, որի տանիքի ձեղնահարկի և հատակի վերանորոգման համար կատարված նախահաշվի համաձայն պահանջվում է 100 միլիոն դրամ:</p> <p>«Հայաստանի Ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ի տանիքի ձեղնահարկի և հատակի վերանորոգման համար ՀՀ 2015թ. պետական բյուջեից հատկացնել 100 միլիոն /հարյուր միլիոն/ դրամ:</p>	<p>կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:</p>
230	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյան	<p>2014թ. մայիսին կառավարության ծրագրում անդրադարձ է եղել 1988-1992թթ Ադրբեջանից բռնագաղթյալների բնակարանային ապահովման խնդրին՝ մինչև 2017թ. փուլ առ փուլ լուծելու այն: Բյուջեի նախագծում նախատեսված է միայն հետևյալ ձևակերպումը. «Գործնական քայլեր կիրականացվեն 1988-1992թթ Ադրբեջանից բռնագաղթած՝ առավել կարիքավոր փախստականների բնակարանային ապահովման հիմնախնդրի լուծման ուղղությամբ»:</p>	<p>ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի № 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 06 բաժնի 01 խմբի 01 դասի «01. Պետական աջակցություն Երևան համայնքին 4-րդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածությունից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերման</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Առաջարկության դիրքորոշումը»
		<p>Ադրբեջանից բռնագաղթվածների բնակարանային ապահովման խնդրի լուծման համար ՀՀ 2015թ. պետական բյուջեից հատկացնել կոնկրետ գումար:</p>	<p>Նպատակով» ծրագրով նախատեսված է Երևան համայնքին տրամադրել 2.0 մլրդ դրամի աջակցություն: Ծրագրի նպատակն է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 45, Շինարարների 6, Շինարարների 15 և Սիսակյան 16 հասցեներում բազմաբնակարան շենքերի կառուցման և այդ շենքերից բնակարանների ձեռքբերման միջոցով լուծել Երևան քաղաքի 4-րդ աստիճանի վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման խնդիրը: Ծրագրում ընդգրկված վերաբնակեցման ենթակա շենքերից թվով 4-ը հանդիսանում են հանրակացարանային շենքեր, որի շրջանակներում կլուծվի նաև այդ շենքերում բնակեցված փախստական ընտանիքների վերաբնակեցման խնդիրը: Լրացուցիչ միջոցների հատկացումը հնարավոր չէ՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:</p>
231.	<p>«Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյան»</p>	<p>Երեխաների ամառային հանգստի կազմակերպման շրջանակներում միջոցներ հատկացնել /ներառյալ՝ ճանապարհաձախսը/Վրաստանի Սամցխե-Ջավախք և Քվեմո-Քարթլի նահանգների սոցիալապես անապահով հայ ընտանիքների 200 երեխաների հանգիստը կազմակերպելու համար:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: 2014 թվականից սկսված կազմակերպվում է թվով 4500 երեխայի հանգիստը, ի տարբերություն անցած տարիների 3000-ի: Ավելացված 1500 երեխաների մեջ ընդգրկվել են նաև Ջավախքից ժամանած 150 երեխաները (երեխաների տրանսպորտային ծախսերը 2014 թվականին տրամադրվել են հասարակական կազմակերպությունների կողմից):</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
232	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Քաղաք Սպիտակի Տեր-Սիմոնյան փողոցի ասֆալտապատում – 80000000 ՀՀ դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Տեր-Սիմոնյան փողոցի ասֆալտապատման նպատակով նախատեսվել է 80.0 մլն դրամ, որը ներառված է «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի № 1 հավելվածի № 13 աղյուսակի 04 բաժնի 05 դասի 01 խմբի «01. Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրի «1.4. Այլ ճանապարհների» գծով նախատեսված գումարում:
233	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արկադի Համբարձումյան (029 ընտրատարածք)	Քաղաք Սպիտակի Այգեստան և Ս.Ավետիսյան փողոցների հենապատերի կառուցում - 8000000 ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
234	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կարեն Սարիբեկյան (031 ընտրատարածք)	«ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություն Քաղաք Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոցի վերանորոգում – 120000000 ՀՀ դրամ:	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 25 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2016-2018 թվականների ՄԺԾ շրջանակներում:
235	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կարեն Սարիբեկյան	«ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություն	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	(031 ընտրատարածք)	Լոռու մարզի Ճոճկան գյուղի խմելու ջրագծերի անցկացում – 100000000 ՀՀ դրամ:	առաջնահերթությունից:
236	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր 65 բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի վերանորոգում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
237	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր 3 մուր մանկապարտեզների տանիքների վերանորոգում և գազիֆիկացում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
238	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր Մշակույթի տան վերանորոգում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
239	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր Արվեստի դպրոցի տանիքի վերանորոգում և գազաֆիկացում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի արվեստի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
240	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր Ներքաղաքային ճանապարհների փոսային նորոգում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
241	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր Ոռոգման 1 խորքային հորի հորատում:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում:
242	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր Թիվ 2 դպրոցի տանիքի վերանորոգում:	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի թիվ 2 ավագ դպրոցի տանիքը հիմնանորոգվել է, որի նպատակով ՀՀ կառավարության 21.11.2013թ-ի թիվ 1334-Ն որոշմամբ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 60.0 մլն դրամ:
243	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր ՀՄԷԿ-ից համայնքին հանձնվի՝ սպորտ համալիրը հանրակացարանը ավտոհավաքակայանը կիսակառույց թիվ 39 բնակելի շենքը:	Սպորտ համալիրը, հանրակացարանը և ավտոհավաքակայանը ՀՀ կառավարության 04.04.2008թ. N 314-Ա որոշման 3-րդ կետով հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը: Վերջինս էլ նույն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետով նշված գույքը նվիրաբերել է Մեծամորի քաղաքային համայնքին: Նշված գույքի հանձնման աշխատանքներն ավարտվել են 2008թ. հուլիսի 28-ին: Իսկ կիսակառույց թիվ 39 բնակելի շենքը ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 98-Ա որոշման 3-րդ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>կետով ամրացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը: Վերջինս էլ նույն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետով նշված գույքը նվիրաբերել է Մեծամորի քաղաքային համայնքին: Նշված գույքի հանձնման աշխատանքներն ավարտվել են 2001թ. ապրիլի 27-ին: Ընդ որում այդ շենքում բնակվում են ՀԱԷԿ-ի աշխատողները:</p>
244.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր Այգեգործական ընկերության հողատարածքն ընդգրկել համայնքի վարչական սահմաններում:	<p>Հարցը դուրս է պետական բյուջեի մասին օրենքի կարգավորման շրջանակներից: Համայնքերի վարչական սահմանների նկարագիրը փոփոխելու համար անհրաժեշտ է 2 համայնքների փոխադարձ համաձայնությունը՝ արտահայտված ավագանիների որոշումներով, որի արդյունքում առաջարկություն է ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն: ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը սահմանված կարգով ուղարկում է կարծիքների շահագրգիռ մարմիններին և հարցը քննարկվում է ՀՀ վարչապետի 2005թ-ի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների վարչական սահմանների նկարագրման աշխատանքների կարգավորման միջոցառումների մասին» թիվ 67-Ա որոշմամբ ստեղծված կառավարական հանձնաժողովի նիստում: Դրական համաձայնության դեպքում մշակվում և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության վարաչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			օրենքի նախագիծ, ինչը ՀՀ կառավարության հավանությանն արժանանալու դեպքում ներկայացվում է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:
245	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր Մաքրման կայանի կառուցում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
246	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր 2008թ-ի պետական բյուջեից համայնքին նախատեսվող դոտացիայի ավելացում:	ՀՀ համայնքների բյուջեներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների ըստ առանձին համայնքների բաշխման հաշվարկները իրականացվում են «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:
247	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր Համայնքի սահմանագծով անցնող սելավատարի մաքրում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
248	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր Պոլիկլինիկայի գազաֆիկացում:	Ներկայումս Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի առողջապահական համակարգի արդիականացում» վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում ընթանում են Մեծամորի բժշկական կենտրոնի պոլիկլինիկական հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Մեծամորի բժշկական կենտրոնը գազաֆիկացված է:
249	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	ք. Մեծամոր Կապի համակարգի վերակառուցում:	Առաջարկը կարիք ունի լրացուցիչ հստակեցման: Պարզ չէ, թե որ կապի համակարգն է առաջարկվում վերակառուցել:
250	ՀՀ Ազգային ժողովի	Արգավանդ	Աշխատանքների իրականացման հնարավորության

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավոր Հրանտ Գրիգորյան	Ոռոգման կիսախողովակների տեղադրում 3 կմ:	հարցը կքննարկվի Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում:
251.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	Արգավանդ Խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
252.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	Արգավանդ Մշակույթի տան վերանորոգում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
253.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Գրիգորյան	Փշատավան Գազիֆիկացում:	Համայնքը մասնակի գազաֆիկացված է: Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
